

# ՆՈՐ-ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՒԱՌ

կամ

## ԳԵՂԱՐՔՈՒՆԻՎ

Ե. ԼԱՂԱՑԵԱՆԻ

ԸՆԴԵԳՈՒԹԻՒՆ

## ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲԱՐՔ

ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՐՍԱՆԻՔԻ ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ<sup>1)</sup>

Հասակ.—Այս գաւառում, հաւանօքէն բնութեան ազդեցութեամբ, միւս, համեմատաբար աւելի տաք, գաւառներից աւելի մեծ հասակում են ամուսնացնում թէ աղջիկներին և թէ տղաներին: Հնումը աղջկան՝ 14—18, տղին՝ 18—25. այժմ աղջկան՝ 16—18, տղին՝ 21—30, եթէ աղջկայ տարիքը քսանից անցնում է՝ ասում են ողախացուծ եւ, (պնդացած է):

Զինուորազբութեան չենթարկուելու արտօնութիւն ունեցողները շատ անգամ՝ 18 տարեկան հասակում են ամուսնանում:

Ամուսնացողների հասակների համեմատութիւնը.—Ընդհանրապէս ամուսինը կնոջից 2—10 տարով մեծ է լինում. մեծ մասամբ կոյսը կուսի հետ է ամուսնանում, և միայն տառնը մնացած աղջիկներն են այրի տղամարդկանց գնում: Շատ հազիւ է պատահում, որ երիտասարդը այրի կնոջ հետ ամուսնանայ:

Ամուսնացողներն ըստ ազգութեան:—Օտարազգիների հետ ոչ անցեալում, ոչ էլ այժմ ամուսնութիւն տեղի չէ ունեցած: Նոյն իսկ օտար գաւառացիների հետ էլ հազիւ է պատահում: Շատ սովորական երեսյթ է օտարութիւնից վերադառնալ յատկապէս ամուսին ընտրելու համար:

Օգորջախազ կամ բեկեարբաւ:—Հնումը յաճախ, իսկ այժմ երբեմնապէս պատահում է, որ երկու գերդաստան, ցանկանալով

1). Բացի իմ հաւաքածից, յատուկ իմ խնդրով նիւթեր և հաւաքել ինձ համար արժ. Եղիազար քահանայ Տէր-Միքայէլհանը և պ. Վ. Պետրոսեան: Ի՞ նկատի եմ ունեցել նաև Ս. Փիլոյիանի «Կորած Մարգարիտը»:

բարեկամանալ միմեանց հետ, ուխտում են, որ եթէ իրենց տարբեր սեռի երեխաներ ծնուին՝ միմեանց հետ ամուսնացնեն Եւ եթէ ծնուում են՝ այս ուխտը սրբութեամբ կատարում են, հաւատալով, որ այդ ուխտի շնորհիւն է Աստուած իրենց որդի պարգևել: Երբեմն էլ արդէն ծնուած երեխաներին միմեանց հետ նըշանում են՝ նրանց օրօրոցների վրայ խաղ քաշելով:

Ամուսնուրեան զանազան դեպքեր.—Պատահում է, որ երկու ընտանիքներ, իրենց միջի արեան թշնամութեանը վերջ տալու համար խնամութիւն են հաստատում: Այսպէս՝ Խ. Յակոբը սպանել էր Կ.-ի որդուն:—որպէսզի արեան վրէժխնդրութիւն տեղի չունենայ, Յակոբը իւր աղջիկը տուել է սպանուածի հղորը:

Ցանախ պատահում է, որ երբ նշանադրուածներից մինը մեռնում է, նրա քոյրը (կամ եղբայրը) ամուսնանում է միւսի հետ, որպէսզի նշանադրութեան ժամանակ կատարուած ծախսերն իզուր չանցնեն: Այսպէս՝ Յակոբը Շիկոյեանի մեծ աղջիկը մեռաւ՝ կրտսերը ամուսնացը ինըն փեսացուի հետ:

Պատահում է նաև, որ հոտաղը (մշակը) երկար ժամանակ հաւատարութեամբ ծառայելով մինի տանը՝ ամուսնանում է իւր տիրոջ աղջկայ հետ: Այս պատահում է երբեմն որպէս զնանատութիւն և վարձատրութիւն նրա հաւատարիմ ծառայութեան, երբեմն էլ որպէս հետևանք զաղունի սիրահարութեան:

Խնամուրեան ասթիճան:—Թէպէտ պահանջեւում է արիւնակցութեան եօթ, իսկ ազգակցութեան հինգ աստիճան հեռաւորութիւն ամուսնական զոյգ կազմելու համար, սակայն զանազան միջոցներով մօտիկներն էլ են հասցնում: Իսկ եթէ ոչ մի կերպ չեն կարողանում պսակի թոյլտութիւն ստանալ, ուժանը կատարում են հարսանիքի հանդէսը, և պսակի փոխարէն հարս ու փեսին դպուլ զուռնի առաջնորդութեամբ տանում եկեղեցի և նրա դուռը համբուրել տալիս ու զարձեալ նոյն հանդիսաւորութեամբ վերադառնում: Ժողովրդական կարծիքը այժմ ներողամուռթեամբ է վերաբերում գէպի սրանց: Այսպէս է վարուել, օրինակ, Նորատուղում Միսաք Ստեփանեանը:

Աղջկատես եւ առաջիկ նարել:—Հարսնացուի ընտրութիւնը՝ «աղջիկ ճարելը» հնումը միանգամայն թողնուած էր երիտասարդի ծնողներին, առաւելապէս մօրը. «ամօթ ունեցող տղան» նոյն իսկ թաքնում էր, երբ նրա ամուսնութեան մասին խօսք էր լինում: Ամուսնացողի մայրը, և եղբօր-կանայք գէրիներում, եկեղեցում և հարսնատներում ընտրում էին աղջիկ և որպէս զի կարողանան մօտից զննել նրան, մի որևէ պատրուակով գնում էին նրա տունը՝ աղջկատես: Վերջինիս ծնողները, ի հարկէ, հասկանում

Էին սրանց գուլու բուն նպատակը, սակայն բոլորովին ցոյց չէին տալիս, միանգամայն թուելով իրենց աղջկայ բարեմասնութիւնները Եկողները դիտմամբ խմելու ջուր էին ուզում, որպէս զի աղջիկը առիթ ունենայ ներկայանալու, խօսեցնում էին նրան, ասեղը թելել տալիս, որ տեսնեն թէ աշքերի արած չունի՞ և այն։ Աղջիկ-տեսից յետոյ գերդաստանական խորհուրդ էր կատարւում, ուր հրաւիրում էր անշուշտ և՝ նշանդրուողի մօրեղբայրը։ Աղջկան քննադատելիս առաւելապէս ուշադրութիւն էին դարձնում նրա մօր բարեմասնութիւնների վրայ։

Այժմ թէ որոշեալ չափով նոյնը կատարւում է, սակայն նշանադրուող երիտասարդն այլ ևս այդպիսի չեղոք գեր չի կատարում. նա կամ ինքն է աղջկայ հետ ծանօթանալով սիրում, ընտրում և կամ գոնէ մօր ընտրածին իւր հաւանութիւնը տալիս։

Խօսի առնեկ. — Հարսնացուի ընտրութիւնից յետոյ յանձնարարում են մի բարեկամի, որ խօսք բաց անի հարսնացուի ծնողների մօտ իրենց մտադրութեան մասին և իմանայ թէ արդեօք կտան աղջիկը, եթէ ուզեն Այսպէս էին վարւում և վարւում էլ են, որովհետև մերժումը տղայի վարկը ձգում է, և շատ ծնողներ էլ անպատւութիւն են համարում իրենց, որ այս կամ այն հարեւնից մերժուած երիտասարդին իրենք աղջիկ տան, միթէ իրենք այդ հարեւններից ստոր են, կամ իրենց աղջիկը նրանց աղջկանից պակաս գեղեցիկ է։

Աղջիկ ուզել. — Սովորաբար տղայի հօրեղբայրը կամ մօրեղբայրը, երբեմն էլ փեսան մի ուրիշ ազգական և կամ քահանան, ինչպէս նաև հայրը, գնում են աղջկայ տունը՝ Շինամախօս։

Շատ անգամ երբ խնամախօսը մօտենում էր աղջկայ տան դռանը՝ կանգնում էր և տառն։

«Էկայ հա, աջ նտքս եմ քցում» \*),

— Բարով ես էկեր ես, Աստուած խերլի (շահաւէտ) անա, պատասխանում էին աղջկայ ծնողները՝ ներս հրաւիրելով, որովհետև արդէն յայտնի էր իինում իրենց նրա գալու նպատակը։

Խնամախօսը հետզհետէ խօսքը կենարոնացնում է նշանուող տղայի գերդաստանի և իր բարեմասնութիւնների վրայ. «Դիտէք իմալ տղայ է, պիանութիւն (հարբեցողութիւն, ուուսերէն ուրացուցուցից) չի գինայ, բոշ-բողազ (քաղցած) ման գալ չի գինայ, գիշեր ցերեկ իրա բանին, իրա տան հոգսը կը հոգայ, չիւրմի (մինչև) իրկուն (երեկոյ) արուն քրտինք կը թափայ։ Որքան էլ

\*) Դուան սեամքից անցնելիս նախ աջ ոտս եմ զնում, որպէս զի բարեբեր լինի իմ այս գալուստը։

տրամադիր լինեն աղջիկը տալու, այնուամենայնիւ առաջին անգամին մերժում են. պատճառաբանելով թէ «ժամանակ չունին» —միջոցները չեն ներում: Բայց երբ խնամախօսը կրկին պնդում է՝ ժամանակ են խնդրում մտածելու, այս արդէն նշան է համարւում, որ արամադիր են տալու, որովհետև հակառակ դէպքում կըտրուկ կերպով առում են, թէ աղջիկը գեռ ևս փոքր է, «քնում աչի գարթնում»:

Մէկէլ եթէ մտադիր են տալու՝ խնամախօսին հիւրասիրում են, իսկ եթէ մերժելու են, չեն հիւրասիրում:

Երբ խնամախօսը կրկին անգամ գիմում է վերջնական պատասխան ստանալու, որանք պատասխանում են: «Գալում են՝ թող գան, բարով գան»:

Եթէ չեն կարողանում անմիջապէս նշան տանել, նշանադրուողների հայրերը մի որեէ խանութում կամ գինեանում, այգում, միքանի մարդկանց ներկայութեամբ մի երկու շիշ օղի են դատարկում միմեանց խնամի անուանելով և բարեմախտելով, որ «Աստուած Խէր տայց», «Աստուած ամօթալի չթողայց»: Ի վերջոյ տղայի հայրը մի մատանի է տալիս աղջկայ հօրը՝ իրը ժամանակաւոր առհաւատչեայ: Յաճախ այս կերուխումին քահանան էլ է ներկայ լինում:

Վերջին ժամանակներս սկսել են կանանց խնամախօս ուղարկել, որոնք և յանձնում են մատանին աղջկայ մօրը:

Նաանդրէն: —Մի քանի օր կամ շաբաթ յետոյ տղայի հայրը իւր տղամարդ և կին բարեկամների հետ, միայն առանց փեսացուին, գնում էին հարսնացուի տունը՝ տանելով «սեղան»—այսինքն մի սկզբեղի մէջ ածած չոր մրգեր, մի գլուխ շաքար, լիմոններ, կճնֆէտներ: Սրանց վրայ դրուած էր լինում հարսնացուի համար ոսկիներ և մի մատանի:

Հարսնացուի տանը մի երկու բաժակ օղի խմելուց յետոյ \*) փեսացուի հայրը յայտնում էր իրենց գալու նպատակը և վերջնելով «սեղանի» վրայից մատանին՝ տալիս էր հարսնացուի հօրը: Սա էլ վերջնում, ուղարկում էր հարսնացուին, որ միւս սենեկում կանանց մէջ էր լինում: Ապա հարսնացուի քահանան, որ անշուշտ հրաւիրուած էր լինում, և կամ, եթէ սա բացակայ էր, քաւորը, առաջարկում էր փեսացուի տղամարդ բարեկամներին հարսնացուին «խալաթ» (նուէր) տալ: Նախ քաւորը և ապա միւսները տալիս էին կամ ոսկի և կամ արծաթ դրամ: Հաւաքողը

\*) Օղին անպատճառ ուղարկում է փեսացուի տնից, բայց ցոյց չի արտում հրաւիրեալներին:

բարձրաձայն յայտարարում էր բոլորին՝ իւրաքանչիւրի տուած նուէրը՝ ասելով. «Եխն կենայ այսինչ բարեկամը, հարսին խալաթ տուեց այսքան դրամ»:

Այս ժամանակ «սեղանը» տանում էին կանանց բաժինը, և մինչդեռ մինը օդի էր մատուցանում, տան տիկինը «սեղանի» և իրենց մրգեղինից մի մի ափսէ լցնելով բաժանում էր օդի ընդունողներին: Սրանը էլ երկար բարեմախտութիւններ անելուց յետ վերադարձնում էին բաժակը, միքիչ ուտում մրգեղինից և մնացածն ածում իրենց թաշկինակի մէջ և ամրացնում գոտկում, որ տանեն տուն, ուր քննատ երեխաններն անհամբերութեամբ սովում էին այդ մրգեղինին: Սրանից յետոյ նախ տղամարդկանց և ապա կանանց ընթրիբ էին տալիս, գիլնդ (կլոր պար) պարում և առաւտեան ցըւում:

Կէս դար առաջ համեմատաբար աւելի աղատամիտները մի քանի երիտասարդներ ուղարկելով բերել էին տալիս փեսացուին, որ լուռ ու մունջ նստում էր մի անկիւնում: Ընթրիքի ժամանակ նրա զիլիին մի թաշկինակ ձգելով՝ երեսը ծածկում էին, որպէսզի աները նրա հաց ուտելը չտեսնէր: Անպարկեցառութիւն էր համարւում նաև աներոջ և սրա չափանաս բարեկամների հետ ընթրիքի ժամանակ խօսելը:

Այժմ նշանգրէքին անշուշտ փեսացուն ներկայ է գտնուում. «սեղանը» այժմ էլ տանում են, որի վրայ բացի մատանուց և ոսկիներից՝ շատ անդամ դրուած են լինում նաև ոսկէ ապարանջաններ, զինտեր, ժամացոյց և այլն: Հարսնացուի քահանան առաջ է բերել տալիս հարսնացուին՝ որի երեսը բաղդադիայով ծածկուած է լինում: Քահանան փեսացուի ձեռքից բռնած տունում կանգնեցնում է հարսնացուի հանդէպ, սրա երեսից բարձրացնում է բաղդագիան՝ որ փեսացուն տեսնի նրա երեսը՝ ասելով. «Մենք անպարտ, դուք պարտական, լաւ տեսէք իրար, որ ձեր համաձայնութիւնը տաք»: Յետոյ հարցնում է փեսացուի համաձայնութիւնը՝ հարսնացուի հետ յօժարակամ նշանազրուելու մասին: Փեսացուն բարձրաձայն յայտնում է իւր համաձայնութիւնը: Բայց երբ քահանան նոյն հարցը տալիս է հարսնացուին՝ սալուր է մնում: բարեկամուհիները հրում են հարսնացուի զլուխը, որ խոնարհացնի ու սրանով յայտնի իւր համաձայնութիւնը, սակայն հարսնացուն յամառում է: Այդ ժամանակ քահանան առաջարկում է. «Դէս; լաւ՝ եթէ համաձայն ես՝ իմ աւետարանն համբուրիք»: Այս անդամ հարսնացուն համբուրում է աւետարանը: Քահանան անմիջապէս ինդրում է մատանին, և մի ափսէի մէջ դրած տալիս է քաւորի ձեռքը: Ապա օրհնում է նշանը և վերց-

նելով մատանին տալիս է փեսացուին, որ դնի հարսնացուի աջ ձեռի մատը Յետոյ գլուխ գլխի է դնում, Մաշտոցը գլխների վրայ դրած՝ տպահպանիչ ասում: Երբ աւարտում է՝ ձայն է տալիս. «Աստուած շնորհաւոր անէ, աչքներդ լուս լինի», Նոյնը կրկնում են բոլոր բարեկամները: Յետոյ քահանան մի ափսէ է ուզում և առաջարկում է փեսացուի տղամարդ բարեկամներին հարսնացուին խալաթ տալ: Այս գումարը յետոյ յանձնում են փեսացուի հօրը՝ որ ոսկիներ կամ ուրիշ զարդեր գնէ և բերէ հարսնացուին Հետզեւոէ այս խալաթ տայլը վերջանում է: Հին ժամանակի նման ալժմ էլ «սեղանը բաժանում են կանանց մէջ, ընթրում, պարում և ցրում: Զոնքանչը փեսացուին ճանապարհ ձգելով՝ նրա ընկերներից մինին յանձնում է մի «բողչա», որի մէջ լինում են եփած հաւեր, թխուածքներ, հալուայ և այլն, իսկ հարուստները՝ սրա փոխարէն ուղարկում են գառը, որպէսզի հետեւալ օրը փեսացուն իւր ընկերների հետ քէփ անէ: Նաղարազունի առաջնորդութեամբ վերադառնում են փեսացուի տունը, ուր թէյ խմելուց յետոյ նոյն նաղարազունով փեսացուն ընկերներով ճանապարհ է ձգում իւր քաւորին:

Վերջին ժամանակիս ազատամիտները փեսացուին պահում են իրենց մօտ և հենց այդ գիշեր հարսնացուի հետ միևնույն անկողնում քննեցնում:

Հարսնաւես—Հնումը նշանազրութիւնից երկու երեք շարաթ յետոյ փեսացուն մի գիշեր մի քիչ չոր միքք և մի որևէ ընծայ կամ դրամ առած գնում էր աներանց տուն իր հարսնացուին տեսնելու: Զոքանչը ընդունում էր նրան և ցոյց տալով, որ աներն այդ մասին ոչինչ չգիտէ, ապա թէ ոչ կըբարկանայ և դուրս կանէ տանից փեսին, հիւրասիրում էր նրան ձուաձեղով, որի վրայ մի քանի կաթ իւր մէզից էր սրսկում, որպէս զի փեսի սէրը դէպի իւր հարսնացուն սաստկանայ: Հետեւալ ժողովրդական երգն այդ նախապաշարումն է ակնարկում:

Փեսէն էկաւ տեղ արէք:

Շոռով ձուաձեղ արէք:

Զուաձեղը ուտելուց յետոյ հարս ու փեսան, յաճախ փոքրիկ քենիներից մինի հետ, առանձնանում էին մի որևէ սենեակ, ուր մինչև լոյս բչփում էին (սիրախօսում), սակայն հարսնացուն մինչև մի նւէր չստանար չէր սկսիլ փեսացուի հետ խօսել: Այս ընծան կոչում էր «խօսուիլ»:

Այժմ գրէթէ ամեն շարաթ երեկոյ փեսացուն առանց քաշուելու աներոջից՝ գնում է իւր հարսնացուի հետ գիշերելու և նոյնիսկ քնում է նրա հետ միասին: Այս ծայրայեղութիւնը թոյ-

լատրում է՝ մինչդեռ ամօթ է համարւում ցերեկով աներանց տունը մտնելը կամ աներանց ներկայութեամբ հարսնացուի հետ խօսելը:

Չիսուկանութիւնը այս գաւառում ևս հարսնացուի առաքի-նութիւնն է կազմում, և նաև փեսացուի ոչ մի բարեկամի հետ, բացի մանր երեխաներից, իրաւունք չունի խօսելու:

Փեսախում.—Երբեմն հարսնացուի ծնողները և նրա ազգականները հրաւիրում են փեսացուին իւր ընկերներով իրենց մօտ ընթրելու, զուարձանալու: Այս հրաւէրքը փեսախուլ է կոչւում: Յաճախ փեսային էլ մի որևէ ընծայ են տալիս:

Հարսնանելք.—Մայիսի մէկին, Համբարձման, Վարդավառին, Աստուածածնին, Ս. Խաչին փեսացուի մայրը մի որևէ բացօղեայ տեղ հրաւէրը է սարքում և հրաւիրում է հարսնացուին և նրա ու իր ազգականուհիներին: Այսպիսի հրաւէրքները կոչւում են հարսնանելք, այսինքն հարսին գուրս, զրուանքի հանելու հրաւէրք և միշտ բացօղեայ տեղ են կատարում, որովհետև մինչև պսակը հարսնացուն փեսացուի տունը չի մտնիլ: Այս հրաւէրքներին փեսացուն, ինչպէս և ոչ մի տղամարդ, չի մամնակցում: Փեսացուն իւր մի քանի ընկերներով մի քիչ հետո ման է գալիս և այնտեղից դիտում իւր հարսնացուին: Զոքանչը մեղքընալով՝ մի շիշ օղի, մի քիչ էլ ուտելեղէն ուղարկում է նրան, որ նա էլ իւր ընկերների հետ զուարձանայ:

Փայեր.—Բարեկենդանին, Շաղկազարդին, Լուսաւորչին, Համբարձմանը, Աստուածածնին և Ս. Խաչին փեսացուի տանից հարսնացուին «փայ» (բաժին), ընծաներ են ուղարկում՝ մի սկսուաղ չոր մրգեր, թխւածքներ, զլիսի շալ, կօշիկներ, զարդարանք և այլն: Հարսնացուի մայրն էլ այս առիթով հրաւիրում է փեսացուի և իւր ազգականուհիներին և հիւրասիրում ընթրիքով: Երբեմն էլ հարսնացուի մայրը մի շարաթ երեկոյ մի գառ, մի քանի շիշ օղի, բրինձ, իւղ և թխւածքներ է ուղարկում փեսացուին, որ յաջորդ կիրակի օրը իւր ընկերների հետ գնայ դաշտը քէֆի: Առանձին ուշադրութեան արժանի է ծաղկազարդի փայը, որովհետև յանձնըլում է եկեղեցում: Այդ երեկոյ բոլոր նշանազրուած աղջիկներն իրենց մայրերի ուղեկցութեամբ գալիս են հկեղեցի: Կալիս են նաև փեսացուների մայրերը՝ բերելով իրենց հետ հարսնացուի համար բաղդատի, չիքիլա, կօշիկ, զլիսարկ և այլն, որոնք և հէնց եկեղեցու մէջ յանձնում են հարսնացուի մօրը: Հարսնացուի ձեռքը խաչաձեւ մոմ տալու սովորութիւնն այս գաւառացիների մէջ չկայ: Փեսացուի այն ազգականուհիները, որոնց ամուսինները հարսնա-

ցուի նշանագրութեան ժամանակ խալաթ (ընծայ) չէին տուել, այս երեկոյ են բերում և եկեղեցում յանձնում նրա մօրը:

Հարսնացուի մայրը փայ և խալաթ տուողներին յաճախ հրաւիրում է իւր մօտ թէյի և ընթրիքի:

Նշանագրութեան ընթացքում եթէ հարսնաց կամ փեսայենց տանը որդեմնութիւն պատահի, միւս կողմի անշուշտ մի գլուխ շաքար ընծայ է ուղարկում: Այս սովորութիւնը շատ հին է և ընծան եսզլանդ է կոչում:

Երբ ննջեցեալ էր լինում, դարձեալ միւս խնամոնք շաքար, գլխի աղլուխ, «բռիչա» այսինքն գաթաներ, կերակրեղչն և այլն էր ուղարկում: Երբ օտարութիւնից մինը վերադառնում էր՝ խնամոնք մի գլուխ շաքար էին ուղարկում իրը «գալ-բարի»:

Տուն կանչել:—Երբ հարսնանիքի օրերը մօտենում են, հարսնացուի բարեկամներն սկսում են հարսնացուին «տուն կանչել» —հրաւիրել իրենց մօտ մի երկու օր մնալու, և մի որևէ ընծայ են տալիս:

Դասան կտել:—Հարսնանիքից 2-3 շաբաթ առաջ փեսացուի հայրը քաւորի և միքանի բարեկամների հետ գնում է հարսնացուի տունը՝ տանելով իւր հետ մի գլուխ շաքար, մի փարչ օղի, մի շալ կամ մի մինթանացու՝ հարսնացուի մօրը իրը կաթնագին կամ մարամանդիլ, մի չուխացու մահուտ հօրը՝իրը «ամսկ հախի» (երախտիքի վարձ): Երբ իրենց անից գուրս էին ելնում, յաճտի փեսացուի հայրն տսում էր. Եա Տէր Աստուած, դու բարի սհաթի ոսաս բերես, խնամուն կալես կապես, աւելի բան չուզի: Եւ Երբ մտնում են հարսնացուի տունը՝ խնամին ընդ առաջ գալով ասում է. Բարով էկաք, լաւ լիքը գաք: —Փառք Աստծու, լիքն ենք, պատասխանում է քաւորը:

Քիչ նստելուց և մի քանի բաժակ օղի խմելուց յետոյ քաւորը ասում է. «Ուզում ենք մեր ն.սրբն սկսենք... ինչ որ բերել ենք պիտմա ընդունես, մէ կծած խնծոր ա պիտմա դապու անես:

Յետոյ ցոյց են տալիս բերած ընծաները և հարցնում, կամ ուղղակի առաջարկում 30—50 ր. իրը բաւել (գլխագին): Առաջները այս գումարի վերաբերութեամբ երկար սակարկութիւն էր տեղի ունենում, որ յաճախ անբաւականութիւնների տեղիք էր տալիս: Այժմ կամ բոլորովին և կամ շատ չնշին գումար են տալիս: Վերջապէս որոշում են նաև Ժխորակլա, այսինքն թէ հարսնանիքի ժամանակ փեսացուի հայրն թնչ պիտի ուղարկէ խնամուն՝ հիւրերին հիւրասիրելու համար: Թէ առաջները և թէ այժմ

ուղարկում են 12 նուկի<sup>1)</sup> օդի, 7 լիտր<sup>2)</sup> միս, 5 լիտր բրինձ,  
1 լիտր իւղ, 2 լիտր չարաղ (չոր միրգ). այս բոլոր հաշիւները  
վերջացնելուց յետոյ որոշում են հարսանիքի օրը:

Քաւորի բամբեն.—Հարսանիքից երեք օր առաջ փեսացուի  
հայրը մի բարեկամի ձեռքով ուղարկում է քաւորին մի գլուխ  
(25-30 ֆունտ) շաքար, մի շիշ օդի կամ ոռմ, շատերը նաև 8-10 ր  
դրամ, և խնդրում, որ պատրաստուի իւր տղի «խաչը բռնելու»:  
Թաւորը հիւրասիրում է բերողին:

Բոյ չափեմ.—Հարսանացուի հարսանեկան շորերը կեսրանքն  
են պատրաստում,<sup>3)</sup> ուստի և մի օր հաւաքւում են բարեկամ կա-  
նայք շորերը ձեւելու և կարելու Մինչեւ սրանք հիրասիրում  
են փեսացուի մօր կողմից, մի կամ երկու կին մի թաշկինակով  
չոր մրգեր առած գնում են հարսանացուի տունը, այստեղ այս բե-  
րած քաղցրեղէնը տալիս են հարսանացուին<sup>4)</sup>, որպէսզի հարս ու  
փեսայ իրար հետ միշտ քաղցր ապրեն, և հարսանացուի չափը առ-  
նում է կատրին և ասում. «Մկրատը չի կարում»: Փեսացուի  
մայրը մի նուէր է տալիս նրան, որից յետոյ ձեռում են և բարե-  
կամ կանանց մէջ բաժանում կարեին:

Տաօսաղրեմ—Հարսանիքից երկու օր առաջ, սովորաբար  
հինգշարթի օրը, փեսացուի տանը «տաշտաղրէք» է լինում, պատ-  
րաստելու հարսանիքի համար հաց: Հաւաքւում են հարս, աղջիկ  
ու չամունացած երիտասարդները Մի պառաւ կին, հաց-թուխը,  
գնում է տաշտը հացատան մէջ տեղը, չորս մոմ վառում տաշտի  
շուրջը, մի մի մոմ էլ բաժանում այդտեղ հաւաքուած այդ հարս,  
աղջկան ու երիտասարդներին<sup>5)</sup> և մազը ձեռքն առնելով բարե-  
մախթում, որ ուրախութեան, բախտաւորութեան հաց լինի, և  
ապա հրաւիրում իրեն նուէրնէր տալ, որպէսզի սկսի ալիւրը  
մաղել ։ Նախ փեսացուի մայրը, քաւոր կինը, փեսացուն և ապա  
այդ հրաւիրեալները դրամ են ձեռում մաղի կամ տաշտի մէջ:  
Ապա նա սկսում է մաղել և յետոյ հունցել, իսկ հրաւիրուած

<sup>1)</sup> 1 նուկին=12 ֆունտի.

<sup>2)</sup> 1 լիտր=3 ֆունտի.

<sup>3)</sup> Մի քանի գիւղերում կեսրանք՝ ստացած բաշլի զրամով:

<sup>4)</sup> Հարսանացուն մրգեղէնը անմիջապէս մօրն է յանձնում,  
որովհետև ստարների ներկայութեամբ կեսրանց անից բերուած  
բաներից ամօթ է համարում ուտել:

<sup>5)</sup> Այժմ այլևս հանդիսականներին մոմեր չեն բաժանում,  
այլ միայն տաշտի և մաղի շարքն են վառում, այն էլ երբ ալիւրը  
արդէն մաղում վերջացնում են:



երիտասարդ—երիտասարդուհիները տաշտի շուրջը պար բռնած, զառած մոմերը ձեռներին «հայլի»-ներ երգելով պարում են: Խմորը հունցելուց յետոյ մի թեթև ընթրիք է մատուցում բոլորին, որից յետոյ ցրւում են: Մնում են միայն մի քանի մատիկ ազդականուհիներ՝ հաց թխելուն օգնելու:

Հարմացուի տանը տաշտաղբեկ տեղի չէ ունենում:

Եզ մորիկ.—Հացի պատրաստութիւնից յետոյ, հետեւհալ օրը, ուրբաթ, առաւտեան, մայի պատրաստութիւնն են տեսնում: Փես սացուի հայրը իւր բարեկամներին հաւաքելով բնբել էր տալիս իւր դռանը մի եզ կամ կով, որի ոտները կապում էին և պառկեցնում, երեսը դէպի արեւելք գարձրած: Նազարա զուռնան սկսում էր ածել. մասգործը դանակը ձեռքին կանգնում էր և չէր մորթում՝ մինչև որ փեսացուն չէր գալիս մի ժխալաթ» տալիս նրան և ոտը չէր զնում եզի վրան: Եւ երբ մասգործը «Ասուուած շնորհաւոր անէտ ասելով դանակով խաչ էր քաշում եզան կոկորդին և մորթում, փեսացուի մայրը մի կողպէք և քաւորը մի դանակ բերում թաթախում էին արեան մէջ և փակում էին: Կողպէքը փեսացուի մայրը պահում էր իւր մօն և բաց անում հարս ու փեսացուն դնում էր իւր գրպանը և բաց անում առագաստի գիշերը: Եթէ այսպէս չանէին, փեսացուի թշնամին կարող էր եկեղեցի գալ, կամ պատկ գնալու միջոցին մի կողպէք կամ դանակ փակել և այսպիսով նորափեսին «կապա քցել—զրկել առնականութիւնից:

Քաղաքում փեսացուի մայրը թաթախում է ձեռքը նոյն եզան արեան մէջ և խաչածն քսում տան դռան ճակատին, որպէսզի չար աչք չդիպչի օճախին:

Մինչդեռ մասգործը քերթում է, կտրատում եզը, հարս աղջիկ երիտասարդների հետ պար բռնած պարում են, իսկ փեսացուն մի քանի երիտասարդների հետ՝ օղի են հրամցնում սրան նրան:

Եզ մորթէքի սովորութիւնը քաղաքում արդէն վերացել է, գիւղերումն էլ վերանում է:

Խնդրանկ.—Եզ մորթէքի միջոցին փեսացուի տանից մարդիկ են ուղարկում բարեկամներին և ծանօթներին այդ երեկոյ հարսանիք հրաւիրելու:

Հրաւիրելու գնացոյները կոչւում են խնդրակ: Սրանք լինում են կամ երկու երիտասարդներ, կամ մի պառաւ կին և մի փոքր տղայ, երիտասարդները հրաւիրում են փեսացուի հօր, իսկ պառաւը՝ փեսացուի. մօր կողմից: Տղամարդ խնդրակներն իրենց հետ փարչով օղի էին վերցնում, և եթէ հրտւիրեալը համաձայ-

նում էր հրաւէրն ընդունելու՝ իւր համաձայնութիւնը յայտնում էր մի կամ երկու բաժակ օդի խմելով և բարեմախոռութիւններ անելով եւ որպէսզի կարողանային հաշուել թէ հրաւիրեալներից քանիսը խոստացան գալ, որպէսզի ըստ այնմ պատրաստութիւն տեսնեն, նախապէս հաջուած փայտէ գդալներից կամ լուցկու արկղիներից մի մի հատ նուիրում էին հրաւէրն ընդունողներին: Քաղաքում հրաւիրեալների անունները գրում էին մի թերթի վրայ, և հրաւիրեալն իւր ձեռքով իւր անուան հանդէպ գրում էր՝ Կթէ գնալու էր՝ «բարի է», իոկ եթէ չէր ուզում գնալ՝ «Չնորհակալ եմ»: Խնդրակներին չոր միրգ կամ սև փող են նուիրում:

Վերջին ժամանակներս քաղաքում ձեռագիր կամ տպուած հրաւիրագրեր են ուզարկում, կէս գրարառ, կէս աշխարհաբար գըրւած՝ միայն փեսացուի հօր անունից, այսպէս... (այսինչը) խընդրում է Ձեզ հանդեմ ընտանեօք գալ և վայելել ուրախութիւն հարսանեաց որդւոյ իմոյ (այսինչի) ընդ օրիրդին (այսինչ), այսինչ ժամանակ:

Նոյն խնդրակներն երեկոյեան դէմ, երբ արդէն հարսնացուի հօրը խոստացուած «խորակը»—միսը, բրինձը ևայլն, ուզարկուած է լինում, մի զլուխ շաքար առած գնում են հարսնացուի տունը և յայտնում, որ այդ գիշեր գալու են նրանց մօտ հիւրի Հարսնացուենք մի ուրիշ գլուխ կամ նոյն գլուխ (25—30 ֆ) շաքարը նոյն խնդրակի միջոցով ուզարկում են թագուորենց, ասելով, թէ բարի գան, մեր գլխի վրայ գան, միր աչքն էլ լուս ըլի, իրանց աչքն էր:

Պետք ասելնակ, որ ընդհանրապէս շատ մարդ հրաւիրելու պատճառն այն է, որ ամեն մի շաքարեալ «ծաղին» մասնակցելով, «խալաթ» տալով լիուլի վճարում է այն ծախսը, որ նրա համար անուում է, այս պատճառով էլ շատ նեղանում են, երբ մինը մերժում է զնալ:

Գերեզման օրինիկ.—Երեկոյեան մօտ փեսացուն մի բանի երիտասարդ ընկերների հետ մի շիշ օդի և մի բանի գաթայ առած՝ քանանայի առաջնորդութեամբ գնում են գերեզմանատուն, ուր իրենց հին և նոր ննջեցեալների գերեզմաններն օրհնել տալուց յետ, խմում են օղին՝ ննջեցեալների հոգուն՝ արքայութիւն բարեմախթելով և վերադառնում:

Թագաւոր նատել.—Երեկոյեան դէմ նաղարա—զուռնան նախ փեսացուի և յետոյ հարսնացուի դուանը՝ մի բարձր տեղ կանգնած նաւողատ է տաւիս՝ աղդարաբում է հարսանիքն սկսուելու մասին՝ ածելով ևսահարիք եղանակը:

Նաւողատ տալուց յետոյ հարսնակորներն սկսում են հաւար-

ուել, գիւղերում շատ անգամ նաղարա—զուռնան փողոցէ փողոց անցնելով հաւաքում է հարսնեորներին և բերում հարսնքատուն՝ փեսայի տունը։ Այստեղ, բակում վառում է մի մեծ շամալ—ձիթուած կամ նաւթուած ցնցոտիներից պատրաստուած ճրագ, որ վառում է մի բարձր ձողի ծայրին։ Սրահում, մի սեղանի վրայ շարուած էին լինում չոր մրգեղիներով լի ափսէներ և օդիի և գինիի շշեր, մօտն էլ մի գատարկ ափսէ։ Սեղանի մօտ մի կին և մի տղամարդ կանգնած ընդունում էին հարսնեորներին և մի մի բաժակ օդիով հիւրասիրում տան գլխաւորներին։ Սրանք էլ 1—3 բախլաթ» էին ձգում ափսէի մէջ<sup>1)</sup> և ապա տղամարդը գնում էր գոմը, որտեղից անասուններին հեռացրել էին, աւելել և փսիաթներով ու կապերաններով զարգարել։ Կինը՝ հացատունը, իսկ երեխաները՝ զոմի սաքուն, երբ գալիս էր քահանան, բոլորը ոտի էին կանգնում, և հրաւիրում նրան վերև, մեծ եղան կանգնած տեղը, ուր նաև մի ներքնարկ էր ձգած լինում։

Երկու սաղիներ (մատուռակ) հարսնեորներին շարունակ օդի էին հրամցնում. սրանցից մինը օդու անազին կումը կողքին կանգնում էր գոմի մէջ տեղում, միւսը՝ ձեռներին մի մի ափսէ, մինի վրայ մի քանի բաժակ, միւսի վրայ չոր մրգեղին՝ գալիս կանգնում էր առաջին սաղի առաջ, օդիով լցնում բաժակները և գնում բաժանում հարսնեորներին։ Ամէն մինը վերցնում էր բաժակը և ասում գառնալով դէպի քահանան։ «Օրնեա տէր», դէպի հարսնեորները՝ սկենդանութիւն, Աստուած շնորհաւոր անիւ, փեսացուի հօրը՝ (այսինչ) «Ճան, աչքներտ լուս ըլլնի, Աստուած միասին ծերացնի», փեսայացուին՝ (այսինչ) «Ճան, բարով վայելեա. ապա կրկին բոլոր հարսնեորներին» և էս ուրախութիւնը ամէն հայ քրիստոնէի տանը կամենայ Աստուած։ Ասելով այս բարեմախթութիւնը խմում էր և դնելով բաժակն ափսէի մէջ, միւս ափսէից փոքր ինչ չշարազ (չոր մրգեղին) էր վերցնում. ուտում։

Երբ հարսնեորների մեծազոյն մասը եկած է լինում, քահանայի առաջսրկով զնում են քաւորին բերելու։ Մի ծերունի և բաւականաչափ երիտասարդներ մի մի վառած մեղրամու ձեռներին բռնած, նաղարա—զուռնի և մի երկու շամալի առաջնորդութեամբ զնում են քաւորի տունը, շատ անգամ մի գլուխ շաքար և մի շիշ օդի ևս տանելով։ Այստեղ օդիով և երբեմն նաև բոզբաշով հիւրասիրուելուց յետոյ՝ վերադառնում էին հարսնքատուն, տանելով իրենց հետ ոչ միայն քաւորի ամրողջ ընտանիքը, այլև մի քանի փեսայ և ամուսնացած աղջիկ՝ իրենց բարեկամներով, որոնց քա-

<sup>1)</sup> Այժմ հետզհետէ վերանում է։

որը ինքն իւր կողմից էր հրաւիրում և որոնք կոչւում էին «քառարի պլունգ»։ Առաջից գնում էին հաղարա—զուռնան, սրանից յետոյ մի ծառայ՝ գլխին դրած քաւորի խալաբը, որ մի մեծ սկուտաղի մէջ երկու երեք լիտը չամիչ ու խուրմայ էր, չորս հատ մանրագլուխ շաքար՝ ամէն մինի գլխին մի մի վառած մեղրամոմ, երկու հատ էլ  $\frac{1}{2}$  Փունտանոց կերոններ <sup>1)</sup>։

Խալաթի յետսեից գնում էին խնդրակները՝ վառած մոմեր և շամաններ ձեռներին, շատերը պարելով, ամենից վերջը գնում էր բաւոր աղան իւր ընտանիքով։

Սրահի սեղանը ի պատիւ քաւորին աւելի ճոխացած էր լինում, և քաւորը, մանաւանդ քաւորկինը բոլոր հասնեորներից աւելի հիւրասիրում էին։

Երբ քաւորը նաղարի դղբացով ներս էր մտնում, բոլորը, բացի քահանայից, ոտի էին կանգնում և նրան վերև, քահանայի մոտ էին հրաւիրում եւ երբ կրկին նստում էին, մէկ մէկ ձայն էին տալիս։ «Քաւոր աղա, բարով, քաւոր աղա, բարով»։

Խալաթի սկուտահղը զրում էր քահանայի տուաջ, որը մի երկու բուռ միրգ էր վերցնում «Աստուած օրհնի քաւոր աղին» ասելով, և հրամայում էր ման ածել և ցոյց տալ բոլորին. ամենքը «Ծէն կենայ քաւոր տղէն»—էին ասում։ Վերջը քահանան վերցնում էր երկու կերոնները և սկուտեղն ուղարկում կանանց բաժինը ցոյց տալու, որից յետոյ արգէն յանձնում էր քիլարչուն՝ հարսանիքի կառավարչին։

Քահանան կերոններից մինը պահում է քաւորին յանձնելու, իսկ միւսը մի թրի հետ կապում է և առաջարկում չամուսնացած երիտասարդներին գնել և այսպիսով գառնալ ազապ—պածի (չամուսնացածների պետ)։ Քահանան ասում է. Օըհնեալ ժողովուրդ, եկեղեցու (այժմ քահանայի) օգուտն է, մի խնայէք, թագաւորին սիրողը թող առաջ գայ։

Աճուրդը սկսում է 2-ր կոպէկից և բարձրանում հնումը մինչև 70 կ. այժմ 2 ր Գնողը վճարում է զրամը քահանային, համբուրում է նրա աջը և վերցնում թուրն ու մոմը։

Հինա-տանեիք.՝Ազապ-պաշու թուրը ծախելուց յետ՝ տեղի էր ունենում նինա-տանեիք. որ այժմ բոլորովին վերացել է. Մի առաջամատոյցի կամ սկուտեղի մէջ ածում էին չարազներ և վերան գնում մի փունտ հինայ, հարսնացուի համար գլխի շորեր և ոտնաման, ու բոլորը կապում մի շալի մէջ։ Փեսացուի մօտիկ

<sup>1)</sup>) Այժմ շաքարի փոխարէն դնում են կամ թէյի արծաթ գդալներ կամ մի ուրիշ ընծայ. Մոմերը վառում են սկուտեղի եղբերին։

նորահարսներից մինը դնում էր այդ հինան իւր գլխին այնպէս՝ որ առանց բռնելու վայր չընկնի և մի ձեռին մի վառած մեղրամում, միւսին մի թաշկինակ առած՝ պարում—հինան խաղացնում, նրա շուրջն էլ հարս ու աղջիկ պարում էին: Մօտ կէս ժամ փեսացուի գուանը այսպէս պարելուց յետոյ, «հինան» յանձնում էին մի երկու երթասարդի և դաւուլ-զուռնի առաջնորդութեամբ հարս ու աղջիկ գնում էին հարսնացուի տունը: Պէտք է նկատել, որ տղամարդիկ չէին գնում: Հարսնացուի դռանը դարձեալ նոյն հարսը «հինան» վերցնում գնում էր իւր գլխին և խաղացնում: Ռւղեկցողները միանալով հարսնացուի տնից դուրս եկած հարս ու աղջկայ հետ՝ պար էին բռնում նրա շուրջը: Կէս ժամաշահ այստեղ ևս պարելուց յետոյ ներս էին գնում և հինա խաղացնոյն այստեղ ևս պար գալուց յետոյ մի ընծայ էր ստանում և հինան յանձնում հարսնացուի մօրը: Անմիջապէս շաղախում էին հինան և հարսնացուի ձեռներն գնում:

Հինա բերողներին պատում էին մի մի թէյի գդալ մեղր ուտեցնելով և մի մի ափսէ բիշմիշ, թխիլ և նոխուտ միասին խառնած լցնելով նրանց թաշկինակները, որ իրենց հետ տանեն:

Ապա հարսնացուենք պասրաստում էին «օապիկ փոխան» կոչուող խալաթը.—չոր մրգեղէնով լի մի առաջամատոյցի վրայ դնում էին փեսացուի համար մի շապիկ, մի անդրավարտիկ, մի թաշկինակ և մի զոյգ գուլպայ և կապելով մի շալի մէջ, դնում էին մի ուրիշ հարսի գլխի, պար ածում, և միենոյն ձեռվ ուղարկում փեսացուի տունը:

**Ենօրինեկ.**—Հինումը հինա-տանելուց, իսկ այժմ աղապապաց ծու թուրը ծախելուց յետոյ տեղի է ունենում փեսացուի ուրօնի. նեկր:—Փեսացուի այն հանդերձները, որ հազնելու է պատկ գնալիս՝ բերում դնում են բահանայի առած, փեսացուն՝ ունենալով իւր աջ կողքին քաւորին, ձախին՝ ազապպաշին, չոքում էր (այժմ կանգնում): Մի բաժակ գինի էլ դնում են հանդերձների մօտ: Թահանան օրհնում է հանդերձը և գինին տալիս փեսացուին՝ որ կէսը խմելուց յետ՝ տալիս է քաւորին խմելու: Երեխն ազապպաշուն էլ են բաժին հանում: Հանդերձ օրհնէքից յետոյ հարմեռները համրուրում էին մաշտոցը՝ և քահանային խաչհամբոյր տալիս: Ապա տղամարդկանց մատուցում էր ընթրիք՝ բոզբաշ, տոլմա և փլաւ:

Մինչեւ տղամարդիկ ընթրում էին կանանց բաժնում: Երեք կանացը չարագ են բաժանում: մինը՝ մի բաժակ օղի-կամ գինի է տալիս, վերցնողը օրհնելով հարս ու փեսին՝ խմում է. անմիշապէս երկրորդ կինը «անուշ ըլի» ասելով մի թէյի գդալ մեղրի

վրայ երկու նուշ դնելով հրամցնում է, որ ուստի՝ բերանն անուշցնէ: Ապա երբորդ կինը մեծ սկուտեղից մի ափսէի մէջ քիշմիշ, թխիլ, նոխում և մի քանի կոնֆէտ ածելով հրամցնում է: Սա հանում է թաշկինակը, փռում գոզը, ափսէն ամբողջովին զատարկում, և թաշկինակը հանգոյց ձգելով ամրացնում գօտիից, որ տանի տուն: Մինչև մազան բաժանում էին, տղամարդիկը աւարտում էին ընթրիքը, ուստի և ամանեղէնը հաւաքում կանացն էին ընթրիք մատուցանում:

Սավիրելու ծերը:—Ընթրիքից յետոյ փեսացուն, «թագաւոր էր նստում»—բազմում էր բերինքսվայր դրուած մի կողովի (քթոց) վրայ, որի տակ փառում էր մի ձիթի ճրագ: Թաւորը և ազապաշաշին վառած կերոնները ձեռներին կանգնում էին նրա աջ և ձախ կողմը, իսկ երիտասարդները մի մի վառած մոմ առած շրջապատում էին նրան: Սափրիչը «Աստուած շնորհաւոր անէ» ասելով սկսում էր ածիլել, և շերտ շերտ մազեր թողնելով, կը հարցնէր: «Տղերք ջան, ով ա ուզում էս ածուն (կամ քեաս տունը) վեկալեա: Մինը պատասխանում էր: «Ուստա ջան, ես եմ ուզում, յաւ շաղկամ կըլի բուսած, առ մի շահիս: Եւ այսպէս զանազան բանջարեղէնի անուններ տալով և 5—20 կ. նուիրելով սափրել էին տալիս բոլորը: Երբ սափրիչն աւարտում էր՝ բոլորը միասին բղաւում էին: «Աստուած շնորհաւոր անիս: Երբեմնապէս էլ մինը բղաւում էր. թագաւորը «թառն էս: Այս ժամանակ բոլորը միասին պատասխանում էին: «Աստծու գառն էս:»

Սափրելուց յետոյ ազապաշին կամ միննոյն սափրիչն սկսում է փեսացուի շորերը հազցնել, նախապէս ցոյց տալով և ամէն մի կոտրը նրա զլիի վրայով երեք անզամ պտոյտ տալով և գովելով: Այս միջոցին երիտասարդ մաղտոնները պար բռնած եայլի ասելով պարում էին:

Այժմ քաղաքում թէ սափրելու և թէ շոր հազցնելու սովորութիւնները վերացել են:

Ուսկապ:—«Թագուորի շորերը հազցնելուց յետ՝ նաղարա-զուռնան կենտ պար էր ածում և մի հարս ձեռին վարդաջրի<sup>1)</sup> շիշը (գիւլապ) կաթաւում էր և մէջընդմէջ մօտենում փեսացուի զլիին ու վրան վարդաջուր սրսկում, որպէսզի նրանից անուշահոտու-

<sup>1)</sup> Վարդաջուրը այսպէս էին պատրաստում. երկու շաբաթ առաջ ջրով լի շշի մէջ վարդ, երբեմն էլ մեխակ ու տարշին էին ածում, խցանով փակում պահում. վարդաջուրը խաղացնելիս խցանի փոխարէն մի թափանցիկ շոր էին կապում բերնին, որպէսզի նրա միջից հոտաւէտ ջուրը սրսկուի:

թիւն բուրէ։ Երբեմն այդ վարդաջրից սրսկում էին նաև քաւորի, ազապաշու և մաղրուորների վրայ։

Դեռ առաջին հարսը չդադարած կաքաւելուց, մի ուրիշ հարս ձեռին մի կանաչ թաշկինակ, (որ ուսկապ է կոչւում), սկսում է պարել և բերում ամրացնում է թագուորի կրծքին՝ աջ ուսից մինչև ձախ կուան տակը ճնումը շատ անգամ մի ուրիշ հարս էլ կաքաւում էր ուսկապ կապողի հանդէա մի փունդանոց շաքարի գըլուխ ձեռքին բռնած, որպէսզի թագաւորի տկանաչ կարմիրը՝ ամուսնութիւնը՝ անուշ՝ բաղդաւոր լինի։

Հարսնանանին։—Ռւսկապից յետոյ թագուորը քաւորի և ազապաշու, ինչպէս և իւր ծնողների ու բոլոր կին ու տղամարդ հարսնացների հետ, գաւուլ-զուունի և շամալների առաջնորդութեամբ և վառւած մեղրամորեր շատերի ձեռին գնում են հարսնացուի տունը՝ Հարսնանանին։

Այստեղ, երբ փեսացուն մտնում է տղամարդկանց բաժինը, ուր խմբուած էին լինում հարսնացուի բարեկամները, երեք անգամ խսր գլուխ էր տալիս։ Խսկոյն նրան պատասխանում էին. Բարձր, բարով թագաւոր, ոտղ խէր ըլնի, վաճառյ շնորհաւոր ըլնի, բարով վայելիս։

Այս միջոցին մէկ էլ հարսնացուի եղբայրը վրայ էր պըրծնում և թագաւորի քրոջը կամ եղբօր կնոջը համբուրում։ Ապրիս, ապրիս զոչում էին այս ու այն կողմից, «լսնաւապոչ առաւ»։

Յետոյ նստում են, սկսում օղի խմել Ապա հարսնացուի քահանան օրհնում է հարսնացուի հարսնանեկան շորերը, որոնց մօտ դնում է նաև նշանի մատանին՝ մի բաժակ գինու մէջ ձգած։

Անմիջապէս հանդերձները տանում են կանանց բաժինը, ուր հարսնացուի վարպետը, նա որ կար ու ձև է սովորեցրել, սենեակի վարպետով առանձնացրած անկինում՝ «փարտի ետել»։ Հազցնում է հարսնացուին՝ նախապէս մի ընծայ առնելով քաւորից։ Յետոյ կանչում է հարսնացուի եղբայրը՝ գօտին կապելու, որ կապում է ասելով։ «Գնա, քուրս, Աստուած քեզ հաց տայ»։

Մինչդեռ հարսնացուն հագնուում էր՝ փեսացուն իւր մաղրուրներով մտնում էր կանանց բաժինը, իսկոյն զոնքաչն ու քենիքը գալիս համբուրում էին սրա երեսը։ Մի տղայ մատուցարանի մէջ չոր մըգեղէն՝ մի ուրիշը մի շիշ շարբաթ (մեղրաջուր կամ շաքարաջուր) և մի բաժակ բռնած առաջ էին գալիս<sup>1)</sup>։ և իրենց ձեռքով խմեցնում և ուտեցնում թէ թագուորին և թէ նրա

<sup>1)</sup> Այս հիւրասիրութեան փոխարէն այժմ մրգիղէնի սեղան են բաց անում և հիւրասիրում նոր խնամիներին։

քաւորին ու ազապաշուն, իսկ հանգիստես կանայք բղաւում էին. անըշ, նոշ, նոշ (անուշ), Մի կին էլ նշախառն մեղք էր դդալով խրում թագուորի և նոր խնամիների բերանները:

Երբ այս հիւրասոիրութիւնն աւարտում էր, նազարա-զուռնան սկսում էր կեստ պար ածել: Հարսնացուի ազգականներից երկու հարս սկսում են պարել, մինի ձեռին վարդաջուր, միւսին՝ կարմիր ուսկապ: Բաւական պարելուց յետ նախ առաջինը վարդաջուր է սրսկում փեսացուի զլիխին, յետոյ երկրորդը կարմիր ուսկապը կապում է նրա կրծքին՝ կանաչ ուսկապի վրայ՝ խաչաձեռ: Այսպիսով կատարում է պառաւների օրհնունքը՝ «բարով կանաչ կարմիր կապենք», այն է՝ բարով ամուսնանաս:

Ի վերջոյ քահանան գնում բանում է հարսնացուի կռնից, միւսից էլ հարսնեղբայրը և բերում կանգնեցնում թագուորի հանգէպ՝ ձեռք ձեռքի տալիս և սկսում պակի խորհուրդը կատարել: Երբ աւարտում է՝ զուռնաչին «Ճանում են, տղէ—ջան, տանում են»-ի տիտուր եղանակն է սկսում ածել: Հարսնացուի հայրն ու մայրը և միւս մօտիկ ազգականները մօտիկնում են մընաս բարեւ ասելու, և սկսում են լայ լինել: Փեսացուի կողմի բարեկամները մխիթարում են: «Ինչ էք լալիս, աղջիկ էք տուէր էք, տղայ էք առեր էք»:

Ի վերջոյ ուղենորւում են դէպի եկեղեցի: արշալոյսը արդէն ծագելիս է լինում: առաջից գնում է դաւուլ զուռնան, յետեկից պարող երիտասարդներ, ապա հարսնելորները՝ շրջապատած թագուորին, որի ձախ կողմից գնում է թագուհին, յետոյ հարսնացը և յետոյ քաւորը, իսկ աջ կողմից ազգապաշին: Թագունու յետեկից նրա քղանցքները բռնած գնում էր հարսնաքուրը: Աւելի հին ժամանակներում թագուորը, որին աջ կողմից ուղեկցում էր քաւորը, ձախից՝ ազգապաշին, բռնում էր մի թաշկինակի ծայրից, որի միւս ծայրից բռնում էր նրան հետեղ թագուհին՝ աջ կողմը հարսնաղերը, ձախ կողմը՝ հարսնաքուրը: Թագունու հայրն ու մայրը չեն գնում եկեղեցի: Թագուորի հայրը փոքր ինչ մնում է սրանց մօտ մխիթարելու և ապա գնում է ուղղակի իրենց տուն:

Հարսնացուի ժառան փակում է հարսնացուի տան դարպանը և չի թողնում հարսնացուին տանելու՝ մինչև որ բաւորը մի ընծայ չի տալիս:

Մակարներից մի բանիսը հարսնացուի տանից խուփ, շերեփ, գգալ և զաթայ են գողանում, որպէսզի նորահարսը խփի պէս բերան խուփ—անխօս լինի, շերեփի պէս՝ բաժանարար՝ տընտես: և զաթի պէս՝ զսմթոր:

Կաքաւելով ու կեցցէներ բղաւելով երբ հասնում են եկեղեց-  
2

ցի, ազապաշին ձեռի թուրն երբեմն մերկացնելով, երբեմն էլ ոչ հպում է դռան կամարակալ քարին, և այսպէս բռնում, մինչև որ հարս ու թագուոր անցնում են նրա տակից և մանում եկեղեցի: Այսպիսով նու «արգելում է չարքերին՝ վնասելու սրանց»: Մի-Այսպիսով նաև վարդում է նաև՝ վերադարձին՝ ամեն մի դռնից մտնելիս:

Մինչդեռ եկեղեցում քահանան կատարում է պատակի խոր-հուրդը՝ հարս ու աղջիկ երիտասարդների հետ գաւթում պարում են: Եւ երբ քահանան աւարտում է՝ հարս ու թագուոր ձեռք ձեռ-քի բռնած կանգնում են եկեղեցու սեղանի առաջ. քահանան մի շշուշպահ (թաշկինակ) է կապում թագուորի կրծքին և Աւետա-րանը գնելով վերան՝ տակից աջ ձեռով բռնել է տալիս: Ապա հարսներները մօտենում համբուրում են Աւետարանը, թագու-որի և թագունու գլուխները և մի քանի կոպէք ձգում տիրացուի բռնած ափսէի մէջ յօգուտ քահանայի:

Եկեղեցուց դուրս գալուն պէօ՞ս սկսում են հրացաններ ար-ձակել, բղաւել, գոտեմարտել, կաբաւել և կամաց կամաց գնալ դէպի թագուորի տունը, միայն ոչ եկած փողոցով: Երբ ազգա-կանների տան մօտից անցնում են, իսկոյն սսեղան են դուրս բերում.—Խմիչք, չոր մրգեղէն, ուտելիքներ են առաջ բերում և հիւրասիրում թագուորին և հարսներներին: Մօտիկները զառ են, բերում և թագուորի առաջ ուղում են մորթել, քաւորը մի նը-ւէր տալով թոյլ չի տալիս: Ուրիշներ էլ հաց, խորոված, սուրճ են առաջ բերում և եթէ բերողները հեռաւոր, աղքատ մարդիկ են լինում՝ քաւորը մի քանի կոպէկ ընծայ է տալիս: Ուրախութիւնը իւր գագաթնակէտին է հասնում, երբ մօտենում են թագուորի տան դռանը, ուր ճոխ սսեղան է բացուած լինում: Մակարները սկսում են երգել:

—Թագուորամէր դուրս արի,

Ցես քե ինչեր եմ բերէ.

Թունտիր վառող եմ բերէ,

Տախդ աւլող եմ բերէ.

Կովեր կթող եմ բերէ,

Գլոխտ դմիող եմ բերէ:

Թագուորամէրը թագուորանոր շալակն ելած դուրս է դալիս տնից, երկուսն էլ պարելով յառաջում և ապա իշնում, միմեանց դէմ կտքաւում են. այս կտքաւի ժամանակ հայրը աշխատում էր մօրը համբուրել, իսկոյն վերջինս վազում էր դէպի թագուորը և համբուրում նրան ու հարսին և ներս հրաւիրում: Շէմքի առաջ կտուրից չոր մրգեղէն, մանաւանդ չամիչ էին շաղ տալիս հարս

ու թագուորի վերայ, մի լաւաշ հաց ձգում հարսի գլխին, որ նու զամթով լինի, մի կճուճ էլ զնում թագուորի ոտի տակ, որ կոտրի և այսպիսով չարը խափանէ:

Ապա թագուորը զնում էր տղամարդկա՞ց բաժինը՝ ձեռն առնելով ազապաշու թուրը՝ իրը գաւազան, իսկ հարսին տանում էին կանանց բաժինը և կանգնեցնում փաթի ետև: Սկսուրը գալիս է և խնդրում, որ նստի, սակայն նա չի նստում, մինչեւ որ մի ընծայ չի ստանում: Եւ երբ նստում է, իսկոյն մի արու երեխայ բերում զնում են հրա գիրկը, որպէսզի նրա առջինելով արու լինի: Սա էլ գրպա՞ց ից հանում է բերած մանկական մի զոյգ գուլպա և նուերում երեխային: Եւ երբ առաջին անգամ ճաշ են տալիս հարսին՝ ամենից առաջ մածուն են ուտեցնում, որպէսզի նա պարզ երես դուրս գայ: Երբ հարսի մօտ կեսրանց կողմից մինը մանում էր, հարսը անշուշտ ոտի էր կանգնում ի նշան յարգոնքի:

Յետոյ ճաշ են տալիս նախ տղամարդկանց և յետոյ կանանց, առանձին խնդրակով հրաւիրելով նաև հարսի ծնողներին: Ճաշին այժմ ընտրում է «թամատայ»—սեղանապիտ և առաջարկում կենացներ թագաւորի ու թագունու, սրանց ծնողների, քաւորի, ազապաշու և այլն, վերջում սպասաւորների և ապա՝ սեղանաւորները առաջարկում են թամատի կենացը:

Ճաշից յետոյ մեծ մարդիկ և կանայք ցրում են, մնում են միայն մակարները, որոնք գուրս են գալիս գաւիթը որձի (որսի):

Որձի.—Հարսի տանից մի ոչխար կամ գառ և կամ մի սագ, իսկ մակարների տնից մի մի հաւ բերում հաւաքում են թագուորի տան գաւիթում կամ կտրանը: Դուրս է գալիս թագաւորը գաւուլ-գուռնի առաջնորդութեամբ, շրջապատուած մակարներով և ձեռքի թուրը մերկացնելով խփում մի հարուածով ոչխարի գըլուխը թոցնում է: Եթէ չի յաջողացնում, խայտառակ է լինում, բոլորը վերան ծիծաղում են: Ապա թուրը կիսով չափ զնում են պատեանի մէջ և երկու մակար բռնում են մինը երախակալից, միւսը ծայրից, բերանը դէպի վեր ուղղած. մակարները մէկ մէկ վերցնում են մի մի հաւ կտմ աքաղաղ, ոտներից բռնում և վիզը խփում թրին՝ կտրում և հաւը դէպի վեր ձգում: Եթէ չեն կարողանում մի հարուածով կտրել, ծաղրի առարկայ հն դաւնում և յաճախ մի աքաղաղ իբր տուլանք վճարում: Այդ հաւերը հաւարում են և այդ երեկոյի համար հաւով—փլաւ պատրաստում, այս պատճառով էլ այդ երեկոն «որձի իրիկուն» է կոչւում:

Մաղ.—Որձի իրիկունը՝ թագուորի գոանը կրկին տալիս է նաւողտը. հարսնեորները կրկին հաւաքում են. խնամոնց և բա-

ւորին գնում գաւուլ գուռնի առաջնորդութեամբ պատուով բի-  
րում են: Տեղաւորում են գործեալ առանձին առանձին, աղա-  
մարդիկ գումում, կանայք հացատանը:

Ծամարդկանց մասում շրւտով սկսում է «Մաղր».—Բաղ-  
ուորը մի երիտասարդի հետ կանգնում է հարսներների մէջ տե-  
ղը երիտասարդը առնում է ձեռքը մի ափոէ և զիմում է նախ  
հարսնացուի հօրը՝ թագուորին մի խալաթ (ընծայ) տալու: Առ էլ  
20—30 ր. գնում է ափոէի մէջ անմիջապէս երիտասարդը բարձր  
ձայնով բցաւում է:

—Են կենայ խնամին, այսքան մանէթ թագաւորին խա-  
լաթ տուաւ, փոխն իր տղին ընի, շէն կենայ, շէն:

—Են կենայ, շէն կոչում են այս ու այն կողմից:

Խնամուց յետոյ խալաթ տալիս է քաւորը, յետոյ միւս հարս-  
ներները: Ամենի խալաթն էլ բարձր ձայնով յայտարարուում  
է. վերջը ամբողջ գումարը հաշում է և կրկին յայտարարուու-  
մասում է 100—100 ը:

Այժմ քաղաքում այս սովորութիւնը վերացել է, մնացել է  
միայն ընթրիքը, որ տեղի է ունենում ծաղից յետոյ: Երբեմն ծա-  
ղը ընթրիքից յետոյ են անում, լաւ հիւրասիրում, որպէսզի  
առատութեամբ խալաթ տան:

Ծամարդիկ ընթրիքոց յետոյ ցրում են. մնում են մի-  
այն մակարները: Այս միջոցին ընթրիք են տալիս նաև կանանց,  
որի աւարտին «զնեզը» բաց են անում: Հարսի օժիտը, որ այդ  
օրը բերուծ են լինում, դնում են հարսներ կանանց մէջ տեղը,  
մի հարս նստում է մօտը և մի ընծայ ստանալով թագուորի մօ-  
րից<sup>1)</sup> բաց է անում, ոմեն բան մէկ մէկ ցոյց տալիս և գովա-  
րանում: Հարսի օժ/ար կազմում էր՝

Մի ձեռք անկողին.

Մի գորդ.

Մի ջեջիւ.

Մի արկղ (սնտուկ).

1—2 ձեռք հանդերձ.

Գուլպաներ և այլն:

Տաև խալաթներ (ընծաներ) սկսայլին, մեծ տեղորը, մեծ փեսին,  
քաւորին և այլոց որեւէ հանդերձելիչն, երես սրբիչ, փողի բասկ-  
գուլպաներ և այլն:

1) Նոր Բայազէտում ջենեղ բաց անողը հարսի գերդաս-  
տանից է լինում և ստանում է մի սոկի ընծայ, որը, սակայն,  
վերադարձնում են, երբ հարսին դարձ են բերում:

Թաղաքում ջեհեղ բաց անելու սովորութիւնն արդէն վերջացել է:

Օժիաը ցոյց տալուց յետոյ կանայք ևս գնում են, այնպէս որ մնում էին միայն մակարները: Այս ժամանակ սրանցից ճարպիկը գողանում պահում էր թագաւորի թուրը և նրա երես-սրբիչը: Թագաւորն իսկոյն թաղթ էր նստում, ընտրում մի քանի թուանքիներ, որոնք այս կամ այն մակարին բռնում էին և մեղադրում այս թրի կամ մի ուրիշ բանի գողութեան մէջ: Իսկոյն թագաւորը մի տուգանք՝ մի հաւ, մի գառ, էր նշանակում և սրանք չարչարում էին մեղադրուածին, երբեմն փալախկայ խփելով, երբեմն մի սեան կապելով, մինչև որ տուգանքը կը վճարէր: Այս տուգանքներով հետեւեալ օրը այդ միենոյն մակարները մի առանձին տեղ բէֆ էին սարքում:

Այս սովորութիւնն էլ այժմ վերացած է:

Թագ—կարել կամ բազվերք.—Հետեւեալ օրը, անշուշտ արեւը մայր մտնելուց յետոյ կատարում են թագ-վերացի ծէսը, քաւորի, ազապաշու և մօտ բարեկամների ներկայութեամբ: Այս միջոցին թագուորը վայր է զնում թուրը, որ միշտ ձեռին բռնած էր ու ներիում և գիշերը հարսի մօտ քնած միջոցին իւր և նրա միջև դրած էր լինում, որպէսզի չկարողանայ մօտենալ նրան:

Նոյն գիշեր առագաստ են մտնում. անկողինը պատրաստում է թագուորի ամուսնացած քոյրը կամ մօրաքոյրը, մօտը զնելով գինի, մրգեղջն և ցուրտ ջուր: Առաւատեան նոյն անձը գալիս է վերցնելու սաւանը և խմբելով իւր շուրջը տան մեծ անդամներին՝ ցոյց է տալիս կուսութեան նշանը: Այդ օրը հարսին խաւիծ են ուտեցնում և օշարակ խմացնում:

Պակից երեք—չորս օր անցնելուց յետոյ հարսը ջուր է տարացնում և լոււանում սկիսրայրի և տեգըների գլուխներն ու ոտները, նուէրներ հարսին չեն տալիս:

Գլուխ լուսցիք.—Առագաստի գիշերից ութ օր անց՝ հարսի մայրը մի գլուխ շաքար առած մի քանի բարեկամուհիների հետ գալիս է հարսի գլուխը լոււալու: Հրաւիրում են նաև թագուորի մօտիկ բարեկամուհիները, Հանդիսաւոր կերպով լոււանում են հարսի գլուխը, նրան օշարակ խմացնում և յետոյ իրենք ուտում, խմում են և մինչև երեկոյ զուարձանում:

Սար-հանեք.—Հարսը պսակից յետոյ երկու շաբաթ շարունակ իրաւունք չունի տանից գուրս գալու: Երբ այդ ժամանակամիջոցը անցնում է, հաւաքում են նրա ընկերուհիները և նրան «սար հանում»—տանիում զրօսնելու: Կեր ու խում, զուարձութիւնը, երբեմն միացած ուխտագնացութեան հետ, յաճախ տեսում է երեք օր:

## ՏՂԱԲԵՐՔ ԵՒ ԿՆՈՒՆՔ

Դաւանան. — Նոր-Բայազէտցիների մէջ դաշտանն սկսւում է 15—16 և շատ հազիւ 13—14 տարեկան հասակում։ Տեսած է 3—8 օր։ Թաղաքացիները գործ են ածում մէջը բամբակ դրած շորեր, իսկ գեղջկունիները մի որևէ շոր։ Դաշտանին Նոր-Բայազէտցիք ասում են ամսական։

Եթէ դաշտանը սաստիկ է լինում, ձեռներին կիր են քսում, դաւա-խոտ կոչուած բոյսը եփում են և ջուրը խմացնում, իսկ եթէ շատ սաստիկ է լինում՝ նստեցնում են որճ ձիու եփ տուած թրիքի վրայ կամ մէջըն երխուու են քցում։

Ամլուրիւն. — Մյա զաւառում ևս ամլութիւնն անբախտութիւն և մեղքի պատիժ է համարում։ Գերգաստանի մէջ ամուր կինը հարածւում է գրեթէ բոլորից, մանաւանդ սկիսուրից։ «Առոտծու անէծքն ա վրէն», «Առոտծու պատիժն ա քաշում», «չոր կոճ ա», «անբար ծառ առ ասում են բոլորը։ «Փարչի բերանը պաչում ես գիտում ես էրեխոնյ առ հեզնում են տեղեր-կնիկները։ «Էւաւ հրնիր (լինէիր) մէկն էլ քե(դ) կինէց», «էրեխայ չունիս ջիգար (խիղճ, գութ) չունիս»։ յանդիմանում են կոռող կանայք։ Նոյն իսկ առուսինն ամուր կինջ հետ լաւ չի վարւում։

Ամլութիւնը բացատրում են այսպէս։ իբր թէ չարքերը զաւակատան (արգանդի) մէջ պտուղը (ձուն) խեղդում, արիւն են դարձնում։ Ով որ սանճու ունին՝ նա չարոցիք է։ Զարոցը պատահում է բառսունքի ժամանակ և այնուհետև կինն այլ ևս չի յղանում։

«Փարչ խափանելու» — չար ոգիներին հալածելու համար «թուղթ են անել տալիս» և կարում մինը գլխին, մինը վզին և մինը՝ թիկունքին և կամ մի տաս կոպէկանոց տալիս են պատրագիչ քահանային, որ պատարագի միջոցին յիշելով չարոցից տանջուողին՝ կիսալուսնաձև կտրէ դրամը, որի մէջ մի թել անցկացնելով կինը կրում է իւր վզին, հաւատալով՝ որ դա թոյլ չի տալ չար ոգիներին իրեն ծօահնալու։

Եւ եթէ թուղթ անելու շնորհիւ կինը յղանում է, անմիշապէս մի կտոր բամբակ են օրհնել տալիս քահանային պատա-

1) Բացի ինձնից, իս խնդրով նիւթեր հաւաքեցին նաև պաղաքաշակ Պետրոսեան և արժ։ Իգնատիոս սարկ։ Տէր Մրգսիսնեան։

բազի ժամանակ, և որահում, երկունքի ժամանակ թիլիսմի թըղ-  
թերի հետ ծննդկանի ոտների մօտ այրում, որպէսզի երկունքը  
խկոյն տեղի ունենայ, այլազէս տասն օր կը քաշի:

Ամլութիւնից ազատուելու համար բացի ժողովրդական դե-  
ղերից<sup>2)</sup> գիմում են նաև հետեւեալ միջոցների. ա. «Ծակ—քար»  
—երի միջից երեք անգամ անցնում են. ոմանք էլ այս կամ մի  
ուրիշ ուխտատեղում քանդում են իրենց գօտին և դնում ներքեն,  
սպասուլով, որ մի տղամարդ գայ վերցնի այդ գօտին և նորից  
կապի իրենց մէջքին: Երբ այս ուխտից յետոյ երեխայ են ունե-  
նում, այդ գօտին կապողն անշուշտ կնքաւայր է դառնալու: Ծակ  
—քարերից նշանաւոր են Օրտակլու գիւղի «Թուլս մանուկ» կո-  
չուած քարաժայալը, Ալիլուլի գիւղինը, և Նոր-Բայազէտից գէ-  
պի Դուլալի տանող ճանապարհի վրայ գտնուածը:

բ. Տեսանընդառաջին ամուլ կնոջը պարանով տան հերթիկից  
հանում են կտուրը, և այս կրինում երեք անգամ:

գ. Համբարձման գիշերը գետի ափին քառասուն թաս ջուր  
են ածում ամուլ կնոջ գլխին:

դ. Ուխտում են, որ եթէ երեխայ ունենան, նախապէս շո-  
րեր չպատրաստեն. և երբ յզանում են՝ մայրը իւր գոգնոցը թոն-  
րի ակն է խրում, որպէս ակն կալ (թոնրի ակը կալող շոր). և  
երբ ծնում է՝ այդ գոգնոցի մէջ են փաթաթում նորածնին, մին-  
չև որ նա վեր է կենում և հարեւաններից կտորներ խնդրելով՝  
շոր կարում: Այսպիսի կտորներ հաւաքողը կոչւում է «դիլակչիւ»:

ե. Ամուլ կնոջն ուտեցնում են մի նորածին երեխայի ընկեր-  
քից մի կտոր խորոված, միայն այնպէս, որ ոչ դա, և ոչ նորա-  
ծնի մայրը այդ մասին ոչինչ չդիտենան. այլապէս ոչ միայն ամ-  
լութեան առաջը չի առնուիլ, այլ և նորածնի մայրը կամլանայ:

զ. Դիմում են զանազան ուխտատեղիներ, մանաւանդ Սևան,  
ուր մի որմէ բան, օր. մոմ, ափսէ, մասունքի վրայից մի մատա-  
նի և այլն, գողանում են և տանում իրենց հետ. և երբ երեխայ  
են ունենում, գողացուած իրի նման մի օրինակ էլ ձեռք ըերե-  
լով՝ վերազարձնում են՝ կրկին ուխտ գալով:

Ուխտազնացութիւնից յետ ծնուած երեխան կոչւում է տու-  
ածուրիկ, այսինքն սրբի տուած. նրան մկրտում են այդ մըկնոյն  
ուխտատեղում և կոչում են նոյն սրբի անունով: Յաճախ այսպի-  
սի երեխայի մազերը չեն խուզում մինչև 7—8 տարեկան հասակը,  
երբ տանում են նրան այդ խնդրակատար ուխտատեղին, մատաղ  
անում և երեխայի մազերը խուզել տալիս սրբի գերեզմանի վրայ

<sup>2)</sup> Տես «Ժողովրդական դեղեր» զլիսում:

և ապա այդ մազերի կշռով մոմ առնում, այդ սրբի առաջ վառում եթէ երեխան Մշու սուլթան ս. Կարապետի տուածն է լինում, նրա պարանոցը անց են կացնում հարուստները՝ արծաթէ, իսկ աղքատները՝ պղնձէ մի մանեսկ (օղակ), որ կարմրագոյն ակ է ունենում: Այս օղակը, որով երեխան սրբի գերին է դառնում, հանում է միայն այն ժամանակ, երբ ս. Կարապետ ուխտ է գնում:

Օրինական ամուսնութեան մէջ մեծ մեղք են համարում բեղմնաւորքան առաջն առնել, և ճաղիւ է պատահում, որ աշխատեն վիճել, որովհետեւ հաւատում են, թէ ռեոդի են կորցնում, և եղքի մէջ պիտի կորչինաւ: Սակայն և այնպէս՝ ցանկանալով գոնէ ուշ ուշ երեխայ ծնել՝ ծննդկանը շարունակ համարում է առաստաղի գերաններից մինչև եօթը և երեք օր անընդհատ աջ կողքի վրայ պարկում, որպէսզի եօթը տարին մի անգամ ծնի:

Ազօրինի կենակցութեան միջոցին անպայման աշխատում են վիժել, կամ, եթէ ծնւում է, խեղգել և ծածուկ թաղել և կամ ծածկաբար տանել և եկեղեցու դռանը ձգել, որովհետեւ համարակական կարծիքը սաստիկ դատապարտում է ազօրինի կեցութիւնը և նոյն իսկ ազօրինի զաւակին: Վիճելու համար երկանք են դնում փորին և աղում, բարձր տեղից թռչում են, փորը գըրտնկում են, ճմրտում, ծանր բաներ վերցնում:

Յղուրեան միջոցին կնոջ աշխատանքի և կենցողի մէջ առանձին փոփոխութիւններ տեղի չեն ունենում: Մինը արտը փոցինիս, մի ուրիշը դաշտում բանջար քաղելիս, երբորդը նոր-Բայազէտից Դուլալիս ուխտ գնալիս չոքել ծնել են: Ուտեսաի վերաբերութեամբ ևս մեծ փոփոխութիւններ չեն լինում, միայն շատերը մտքափ ոխ են լինում, զանազան ուտելիքներ, մանաւանդ թթու բանից են ուզում: Սովորաբար այսպիսի կանանց րուրոքմահաճոյքները կատարում են, վախենալով որ հակառակ դէպքում կարող է տանցուակ անելք—վիժել:

Նախքան ծնունդը երեխայի սեռը որուելու համար դիմում են հետեւեալ միջոցների:

ա. Զննում են յդի կնոջ փորը, եթէ կլոր է լինում և փոքր, բացի սրանից գէմքը առոյգ, և սիրում է ձեռները կրծքին դնել, ասել է արգանդինը տղայ է: իսկ եթէ փորը անճռունի է՝ մեծ, գէմքը դալկացած և սիրում է ձեռները կախ պահել՝ աղջիկ: Եթէ լողանալուց յետոյ փորը մեծանում է՝ տղայ է, եթէ փոքրանում՝ աղջիկ:

բ. Տղան աջ կողմումն է լինում, աղջիկը ձախ:

գ. Վարպետ կանայք շոշափում են, եթէ ձկան ձև ունի՝ տը-  
ղայ է, թէ գորտի՝ աղջկայ:

դ. Եթէ չորրորդ ամսին է խաղում աղջիկ է, իսկ եթէ հին-  
գերորդին՝ տղայ:

ե. Եթէ սրաի տակն է խաղում և արագ՝ աղջիկ է, եթէ ա-  
ւելի ներքեւ և հանգարտ, ձկան նման՝ տղայ:

զ. Գուշակում են նաև երազներից. եթէ մարգարիտ, ոսկէ  
մատանի, քորոց են տեսնում նշանակում է տղայ է լինելու, իսկ  
եթէ լաշիկ, հանգերձ, ասեղ՝ աղջիկ:

է. Եթէ դանակ, թել, քորոց եւ գտնում, գուշակում են՝ որ  
տղայ է լինելու, իսկ եթէ ասեղ, կոճակ, ուլունք՝ աղջիկ:

ը. Հաց թխելիս խմորի մի գունա ձգում են թռնիր, կրակի  
վրայ, եթէ առանց ճաքուելու թիւում է՝ ասում են տղայ է լինե-  
լու, իսկ եթէ ճաքում է՝ նշանակում է աղջիկ է լինելու:

թ. Մատնոցի մէջ ջուր են ածում և վերան կանացի ստին-  
քից մի կաթիլ կթում են. եթէ կաթը իշնում է ջրի յատակը՝  
նշանակում է, որ սպասուող երեխան աղջիկ է, իսկ եթէ կանգ-  
նում է երեխին՝ տղայ:

ժ. Եթէ յղի կնոջ ծծի պառուկը սև է՝ արգանդի պառուղը  
աղջիկ է լինում, իսկ եթէ կարմիր՝ տղայ:

ժա. Եթէ յղի կնոջ պորտը գուրս ընկած է՝ ծնուելիք երե-  
խան տղայ է լինելու, իսկ եթէ ներս ընկած՝ աղջիկ:

ժբ. Եթէ յղի կնոջ նստառեղին լայն է լինում, ծնուելիք  
երեխան տղայ է լինելու, իսկ եթէ նեղ՝ աղջիկ:

Յղութեան ընթացքում կանայք աշխատում են գեղեցիկ և  
լաւ մարգկանցով իրենց շրջապատել, որպէսզի սրանց մինի դէմ  
արգանդի երեխան խաղալով, նրա բնութիւնը և գեղեցկութիւնը  
ստանայ: Նաև երկարավիզ փարչից են ջուր խմում, որ ծնուելիք  
երեխան երկարավիզ լինի: Զու են գողանում ուտում, որպէսզի  
երեխայի այտը պուն (փոսիկ) ունենայ: Ուխտատեղիներում ուխ-  
ներեն (սրբի գերեզմանի հող) են ձգում բերանները, խաչալուայ  
ջրից խմում և համբուրելով ուխտատեղին՝ ձեռքը զնում են իրենց  
մարմինի այն տեղում, ուր կը կամենային որ ծնուելիք երեխան  
խալ ունենար:

Երբ մօտենում են երկունիք օրերը՝ կանայք սկսում են առա-  
տաձեռն գառնալ, որորմութիւն բաժանել, ամենի հետ շատ լաւ  
վարուել, նրանց օրհնէնքին՝ ըբարով էտ նեղ տեղից աղատուես՝  
արժանանալ, նրանք դնում են հացը իրենց փորի վրայ և խաչ-  
փակ (խաչաձև) կտրում տալիս շանը, որ կուշտ ուտի և իրենց օրին-

նիւ եւ որովհետեւ նրանց «մէ ոտը էս հանդէն ա, մէկէլը էն» նախապատրաստում են մանուան և հաղորդում են:

Երկունքն սկսուելիս կանչում են տատմօրը, ծննդկանի մօրը և մի քանի բարեկամուհիներ: Տատմայրը նախ և առաջ սկսում է աղօթել. առ. Աստուածածին, քո ծնունդի, քո անարատ ծնունդի սատաղէն (ի սէր) գու բարի աղաւութիւն տաս իմ ողոցկանին, կալած կազած բողչէն բանաս՝ որդին մօրից բաժանեսա: Ապա մէջքի կողմից շարակում է տղոցկանին և թափ տալիս՝ որպէսզի «երակները բացուին և ծնունդը շուտ աեղի ունենայ»:

Այնուհետև աշխատում են երկունքը նեօտացնել և դիմում են հետեւալ միջոցների:

Տղոցկանի գօտին, կոճակները, մազերն արձակում են և վերցնում նրա գինտերը, մատանիները, ապարանջանները: Միաժամակ արձակում են նաև նրան շրջապատողների և նրա ամուսնու գօտիները: Նոյն սենեակում եղած բուրո խփած պահարանները, արկղները և ամանները բաց են անում, որպէսզի տղոցկանի արգանդն էլ բացուի: Ամուսինը գրսից իւր չուխի փէշով ջուր է բերում և խմացնում նրան: Ջուր են ուղարկում քահանային՝ որ օրոնէ՝ նախապէս մի խճռուած թել արձակելով և այդ ջուրը բերում խմացնում են: Նոր-Բայազէտում Կարապետենց տանից բերում են սուրբ Աստուածածնի ձեռքը (փայտից շինած), ձգում ջրի մէջ և խմացնում: Ընդհանրապէս մի որեէ, բայց առաւելապէս Շաղկուինց, Նարեկը բերում դնում են հացի շտեմարանի վրայ, նախապէս մի հաց դնելով և շուրջը մոմեր վառելով և յետոյ հրաւիրում են քահանային, որ դայ այդ Նարեկից մի քանի գլուխ կարգայ ծննդկանի վրայ: Համայիներ են բերում և կապում ծննդկանի վզից, նրա շուրջը պողպատ, շիշ, դանակ, դաշոյն, սուր են հաւաքում, որ չարերը չկարողանան մերձենալ: Ծննդկանին մի քանի անգամ պտոյտ են ածում թոնրի շուրջը և ապա կանգնեցնում նրա մօտ. թոնրի մէջ մի քիչ կրակ են անում և ծննդկանին կանգնեցնում նրա վրայ մի ոտը թոնրի մի շրթին, միւսը՝ միւս շրթին: Այս միջոցին մինը ներս է գալիս դիտմամբ: Ասում են ինչի՞ եկար ոտք ծանր է: Խակ նա պատասխանում է: Չէ ոտս շատ թեթև է:

Արու երեխան 2—3 օր աւելի ուշ է ծնւում բան աղջիկը, իսկ վերջինս՝ երբ լրանում է 9 ամիս, 9 օր, 9 ժամ և 9 րոպէն: Սովորաբար տղան ծնում է լուսնի նորին, իսկ աղջիկը՝ լուսնի խաւար միջոցին:

Հաւատում են, որ երեխան մօր արգանդում չնչաւոր է, մի-

այն հոգի չունի, հոգի է առնում ծնուած բոպէին Գաբրիէլ հրեշտակապետից, որը և գրում է նրա ճակատագիրը:

Մնադկանը ծունը է դնում մի շորի կամ ներքնակի վրայ՝ երեսը դէպի արենելք գարձրած: Երկու կին, որ տնդական բարրառով կոչում են մանկաբարձ, բնում են նրա կռներից, տառմայրը չոբում է նրա յետնում և երկու ձեռքով հուփ տալիս յետովը, Երբ ծնուած է երեխան, պորտը կապում են և դնելով ցանի (աթարի) վրայ՝ զանակով կտրում են, նախառէս մի ընծայ՝ պորտ կտրելէ: Դանակը պղծուած համարելով չեն դործածում, մինչև որ մեռնածջրի մէջ լուանալով չեն սրբում:

Պորտի արիւնից ատամէրը բուում է աղջիկ նորածնի երեսին, որպէսզի նա գեղեցիկ լինի. իսկ եթէ տղայ է զանց է առնուած այդ ասելով՝ «Ճուճն երեսին կարկատան ա» (եթէ տղեղ էլ լինի՝ ոչինչ, տղայ է): Մինչև պորտի ընկնիլը տանից կրակ դուրս չեն տալիս:

Տղայի պորտը ձգում են շուկան, եկեղեցու, ուսումնարանի գաւթի կտուրը, որպէսզի երեխան մարդամիջի, եկեղեցասէր, ուսումնասէր, առեւտրասէր լինի, իսկ աղջկանը թաղում են մի մութ անկիւնում՝ որպէսզի համեստ, ամօթխած լինի: Այս նախապաշտրմունքից յուռաջացել է հետևեալ անէծքը. «Պորտ կըտրողիդ հէրն անիծած, տես ուր է քցել պորտք»:

Պորտը կտրելուց անմիջապէս յետոյ մի կապերտի վրայ տաք մոխիր են ածուած և ծննդկանին վերան պարկեցնում 4—5 ժամ, մինչև որ արիւնը քանուամ է, միանգամայն գօտիով կամ փեշտմալով փորը կապում են, ապա տեղափոխում իւր անկողնի մէջ:

Ազատուելուց, տեղական բարբառով «զարկելուց» անմիջապէս յետոյ լաւաշ հացով սոխ և նի փաթաթում և տալիս ծննդկանին որ ծամի թափի և մնացածը իւր գլխի վրայով երեք անգամ պտոյտ տայ և գուրս ձգի, որպէսզի չար ողիները եթէ ներկայ են, հեռանան և ծննդկանի լեարդը (զիգետը) չհանեն տանին:

Ապա մեխակով ու կինամոնով թէյ են, խմացնում, կլոր պղպեղ (բիբար), տաք կոռ (սմբոր), զոյնչան, կինամոն (տարչչին) ծեծում են, մեղրով շաղախում և ուտեցնում ծննդկանին, որ ոյժ սոտանայ:

Եթէ ծննդկանի ընկերքը շուտով չի ընկնում, մի շիշ են տալիս նրա ձեռքը՝ որ մէջը փշի: Եւ երբ ընկնում է՝ եթէ առջինեկի է՝ թաղում են ծնուած տեղում, եթէ ոչ՝ շէմքի մօտ կամ դուրսը մի առանձին տեղ, որպէսզի շունը չգտնի ուտէ, ապա թէ ոչ կինը կը գրկուի ծննդաբերութեան ընդունակութիւնից:

Ծննդաբերութեան ներկայ եղողները ինսդրում են նորազատուած ծննդկանին, որ իրենց օրհնի: Նա էլ ձեռքը դնում է սրանց գլխներին և օրհնում: Հաւատում են, որ այդ տեղ ներկայ է լինում հրեշտակը և արձանագրում է ինչպէս ծննդկանի գոհունակութիւնը կամ դժգոհութիւնը, այնպէս և նրա օրհնութիւնը:

Ծննդաբերութիւնից յետոյ տնեցիները հսկում են, որ ծը-ննդկանը ուշագնաց չլինի, և այս նպատակով խօսեցնում են նը-րան, ձեռք մի կծիկ են տալիս որ կծկի, բայց եթէ ուշագնաց է լինում՝ ականջներից քաշում են, թերերի տակը արորում, երեսին ջուր սրսկում: Կարծելով որ ուշագնացութիւնը պատահել է նրանից, որ չարբերը նրան բռնել են՝ հրացան են արձակում, որ փախցնեն սրանց, կամ փափախ են ծածկում ծննդկանի գլխին, որ չար ոգի-ները խափուին, կարծեն թէ ծննդկանը դա չէ, այլ սա մի ուշ-գամարդ է և հեռանան. Նրա անկողնի վրայ գարի են ածում և մի ձի բերում, որ այդ գարին ուտի: Ջին խրինջում է և նրա ձայ-նից ծննդկանը սթափում: Նաև մի հաւ են մորթում և գլուխը տան հերթիկից կտուրը ձգում, հաւատալով որ չար ոգիներն էլ նրա հետեւից դուրս կը գնան:

Ծննդկանին պարկեցնելուց յետոյ տատմայրը լողացնում է նորածնին. Նախ աղ է բառում բերնի առաստաղին, թերերի տակ, և տաք աղաջրի մէջ լողացնում առանց սապոնի, միայն գլխին քսում է ձուի գեղնուցը, որ խոշրուկ հիւանդութիւնը չստանայ, և յետոյքին՝ աղ և մուր՝ որ տեռատեսութիւն չունենայ: Տաշտի մէջ մի որևէ պողպատէ կամ երկաթէ իր են դնում, որպէսզի չար ոգիները չմերձենան: Լողացնելիս տատմայրը շարունակ ա-ղօթում և բարեմախտութիւններ է անում. «Բրիստոսի ական ջուրն հնի, դրախտի ջուրն հնի, ջրի դայտի լի ապրես, աջողակ հնես, ջանով հնես»:

Լողացնելուց յետոյ խանձարուրում է՝ «զոնդաղում ա», եթէ առջինեկ է՝ տատի բերած բալուլոցը, խսկ եթէ մի քանի եր-րորդը՝ մօր նախապէս պատրաստած շորերով:

Սրանից յետոյ տատմայրը գրկում է խանձարուրը (զոնդա-խը), վերան երկու հաց դնում, ձեռքին ծայրը մի սոխ ցցած շամ-փուր առած շէմքն ու պատը խազելով գուրս գալիս տնից, բարձ-րանում կտուրը և գէպի արեեցը դառնալով, ազօթում. Շլուս արեգակ, դու էս էրեխին զսմաթ տաս», «Նօրն ու մօրը սաղ ջան տաս», յետոյ ձեռի շամփուրով խաչած գիծ է քաշում գետնին, խաչակնքում և վերադառնում, թեթեռութեամբ նստում է ծնընդ-կանի անկողնի վրայ և Յ անգամ հարցնում. —Մարեամ (ինչ էլ որ լինի ծննդկանի անունը), Բս եմ թեթև, թէ դու:

Սա պատասխանում է. ես եմ թեթև:

—Թեթևութիւնով անցնի, պատասխանում է տատմայրը և տարով նրան երեխան՝ ասում. Աչքդ լուս հնի, Մայրամ, աւետիք որդի առեր ենք, մնացական որդի հնի:

Սրանից յետոյ տան փոքրերը վազում են բարեկամների աները և «աչքի լուս» տալիս՝ հաղորդելով երեխայի ծննդեան մասին Մի որև է բան նուրիբելով որանց՝ բարեկամուհները ծննդգուար են պատրաստում և գալիս ծննդկանին տեսութեան: Ծննդգաւաթթը բաղկանում է խաւիծծից, հալուայից, եփած հաւից, խմորեղէններից, ձուածեղից, մեղրից, շաքարից և այլն:

Եթէ նորածինը տղայ է, սաստիկ ուրախանում են թէ ծընողները և թէ բարեկամները, իսկ եթէ աղջիկ՝ ծնողներն այնքան տիգրում են, որ բարեկամներն ստիպուած են լինում՝ միսիթարել նրանց, յուսազրելով, որ տղայ էլ կունենան: Մեծ ուրախութիւն է պատճառում մանաւանդ երբ առջիննեկն (առաջին որդին) է արդայի, որովհետեւ սառջիննեկը յառաւօտ է, կը հնի կխասնի իօր քամակին», մինչդեռ «աղջիկը զըսի պատ առ—այսօր կայ՝ վաղը կը գնայ, «աղջիկայ ոտներն աւաղան՝ զլոխը գերեզման» պիտի լինի: Տղան կոչւում է վարդաշալակ, աղջիկը՝ բաքաշալակ:

Ահա այն մի քանի նստապաշարմունքները՝ որոնց դիմում են արու որդի ունենալու:

Հարսանեկան շորերը ձեելիս՝ դիմումը դրսից մի տղայ են ներս բերում:

Հարսը կեսրանց տուն առաջին՝ անգամ մտնելիս՝ մի արու երեխայ են գիրկը դնում:

Առաջին անգամ երեխային լողացնելիս՝ տատմայրը եթէ երեխան արու է՝ կաթսայի մէջ մի քանի թաս ջուր է թողնում, որպէսզի սրա յոջորդը ևս տղայ լինի, իսկ եթէ աղջիկ՝ բոլոր ջուրը ածում է, որպէսզի գինչակն ջուրը կտրւում է, այսպէս էլ աղջկայ «քոքը» (արմատը) կտրուի.—այլևս աղջիկ չծնի:

Միևնոյն տրամաբանութեամբ տղայի պորտը կտրելիս մի քիչ երկար են թողնում, իսկ աղջկանը՝ հէնց արմատից են կըտրում:

Կնունք.—Ծննդարերութիւնից մինչև կնունքը թէ ծննդկանը, թէ նորածինը և թէ տատմէրն ու մանկաբարձները (տատմօրը օգնող կանայք), անսուրը են համարւում. մարդիկ նրանց հետ շատ չեն շփւում, նրանց հետ հաց չեն ուտում, նրանց ձեռքից բան չեն վերցնում, և նոյն իսկ այն իրերը և ուտելեղէնները, որոնց նրանք ձեռք են տուել՝ պղծուած են համարում և չեն գործածւում. ուստի և սրանց համար առանձին ամաններ են պահում,

որոնք յետոյ մեռունաջրով սրբում են: Ծննդկանը սրբում է սի-  
այն այն ժամանակ, երբ «մեռուն է դալիս տուն», այնպէս որ հթէ  
երեխան մեռած ծնուի կամ առանց մկրտուելու մեռնի՝ նա (ծը-  
ննդկանը) անսուրբ կը համարուի, մինչև որ նոր որդի ծնի և մկրտ-  
ուել տայ: Զմկրտուած երեխան ևս անսուրբ համարուելով եկե-  
ղական թաղման ծխակատարութեան չի արժանանում: Նրան  
թաղում է տատմայրը բակի մի անկիւնում:

Մկրտութիւնը տեղի է ունենում ծննդաբերութիւնից 3—8  
օր յետոյ, շատ հազի՞ւ աւելի ուշ: Մկրտութեան առաւօտը ծը-  
ննդկանը կիսից վայր լուացըում է, սրբում, տատմայրը լողաց-  
նում է երեխային և ապա՝ մի գլուխ շաքար կամ մի եփած հաւ  
տանում քաւորին ու հրաւիրում նրան եկեղեցի՝ մկրտելու երե-  
խային:

Այս գաւառում ևս քաւորը տոհմական է լինում, որին փո-  
խում են միմիայն այն դէպքում, երբ Շնրա ձեռքը տան վրայ չի  
դալիս, այսինքն երբ նրա մկրտած երեխաները չեն ապրում և  
կամ սանամայրը շարունակ աղջիկներ է ծնում:

Քաւորը մեծ յարգանք է վայելում, սանամայրը նրա հետ  
չի խօսում, նրանց դռնով չի անցնում, նշանաւոր տօներին նրան  
«բողչա» կամ «սեղան» է ուղարկում, երբեմն փոխադարձաբար  
մի ընծայ ստանալով:

Տատմէրը երեխային գրկած տնեցիներից մի քանիսի հետ  
գնում է եկեղեցի. պէտք է ասել, որ երեխայի հօրը արգելում է  
ներկայ լինել մկրտութեան խորհրդին: Մկրտութիւնը կատարե-  
լուց յետ՝ երեխան քաւորի գրկում, ձեռքերին մի մի մոմ, քահա-  
նայի առաջնորդութեամբ գալիս են ծննդկանի տունը, երբ քա-  
ւորը երեխային տալիս է ծննդկանին, սա անկողնու մէջ նստած  
տեղից փոքր ինչ խոնարհում է, համբուրուս երեխայի խանձա-  
րուը և վերցնում նրան, ապա երկու մոմը առնում ձեռքը: Աւե-  
տարանի ընթերցումից յետոյ ծննդկանը երեխային պար-  
կեցնում է իւր աջ կողմում յատկապէս դրուած բարձի վրայ, որի  
երկու կողմում մի մի հաց է դրուած լինում, տորպէսզի երեխան  
դովլըթուր լինի:

Սրանից յետոյ կընթիմ նաև է տեղի ունենում: Հրաւիրուած  
են լինում 20—30 տղամարդ և կին՝ ճաշելու: Ճաշի ժամանակ  
բարեմախտութիւններ են անում երեխայի և ծնողների համար՝  
«Աստուած հօրով մօրով պահի»: Նոտի ճաշում են տղամարդիկ  
առանձին և ապա կանայք առանձին: Քաղաքում այժմ տղամար-  
դիկ և կանայք թէն միասին մի սեղան են նստում, սակայն տղա-  
մարդիկ առանձին, վերևը, իսկ կանայք առանձին՝ ներքեւում:

թաւորը շատ անգամ մի որևէ ընծայ է բերում սանամօքը  
և սա էլ նրա փոխարէն մի բան է նուիրում:

Այժմ հետզհետոէ ընդհանրանում է սանիկի համար բաւորի  
կողմից մի արծաթէ կամ ոսկէ խաչ տանելու ուսւական սովորութիւնը:

Անունների ընտրութիւնը վերապահուած է գերդաստանի հօռը. շատ քիչ դէպքերում ուշադրութիւն են դարձնում մօր ցանկութեան: Ընդհանրապէս զնում են այն սրբի անունը, որին նուիրուած է նրա ծննդեան օրը, այս պատճառով և սրբերի անուններ ամենից աւելի են պատահում: Սովորական է նաև գերդաստանի մեռած անդամների անունները տալ նորածիններին, որպէսզի այսպիսով վերականգնեն նրանց յիշատակը: Այժմեան ծերունիների անունների մէջ գերակշուում են սրբերի և թրքական անուններ, նոր սերնդի մէջ՝ հայկական և մասամբ ուսւական:

Ահա մի քանի անուններ՝ իրենց կրծատումներով:

### ՏՂԱՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՈՒՆՆԵՐ

#### I Արքերի

- Եղիա, Եղօ.
- Եսովք, Ենոօք.
- Յակոր, Յակօ.
- Յարէթ.
- Արքահամ, Արրօ,
- Թագէսո, Թաղօ.
- Մարգիս, Միրգօ.
- Խաչատոր, Խաչօ, Խաչիկ.
- Համբարձում, Համբօ.
- Աւետիս, Աւօ, Աւետ.
- Յարութիւն, Յարօ, Յարթէն.
- Բարեաղամ, Բաղօ.

#### II Թրքական

- Ասլան.
- Ջիվան.
- Ջոհրար, Ջորար.
- Ջիվանշիր.
- Մաշնում.
- Սայեաթ.
- Արզման.
- Օրդուխան.
- Բէջան.

#### III Հայկական

- Հայկ-Արտի, Հայկարամ.
- Ցիգրան.
- Գեղամ.
- Խոռէն.
- Մուշդ.
- Վաղարշակ, Վաղօ.
- Արևշատ.
- Նաւսարդ, Նաւօ.
- Մնացական, Մնէ.
- Աստուածատուր, Ասպատուր,
- Ասատուր, Ասօ.
- Սիրական, Սիրօ.
- Կիրակոս, Կիրօ.
- Պատուական.
- Յովագ.
- Մանուկ, Մնօ.
- Հայրապետ Հայրօ.
- IV Խուսական
- Իվան.
- Կնեագ.
- Զեմիզով.
- Սերգէյ, Սիրգօ.

## ԿԱՆԱՆՑ ԱՆՌԻՆՆԵՐ

## I Մրցերի

Մարիստ, Մարո, Մարգուշ.  
Ովսաննա, Օսան.  
Գայրանէ, Գարան.  
Նունէ.  
Սանդուխտ.  
Հոփիսիմէ, Հուէլի, Խոռորդ.  
Շողակաթ, Շոզ.

## II Թրքական

Նարգիզ.  
Չումբուխտ.  
Ջյնալ.  
Ղատիֆա, Ղատօ.  
Ջաւահիր, Ջաւօ.  
Սանամ.  
Մարալ.  
Նունուֆար.  
Մալիի, Մալի.  
Սուսանբար.  
Խանում.  
Ջանան.  
Աղիզ.  
Ալմազ.  
Գիւլնազ, Գիւլօ.

## III Հայկական

Թագուհի, Թագօ.  
Ծաղիկ, Ծաղօ.  
Տիրուհի, Տիրուն.  
Աշխէն, Աշխօ.  
Զանազան, Զանօ.  
Իսկուհի, Ակուն.  
Աստղիկ.

## IV Սրբուհի, Սրբօ.

Արիգնազան, Արեգ.  
Վարսենիկ, Վարսօ.  
Արուեսակ, Արիւս.  
Վարդուհի, Վարգօ.  
Նազէ.

## V Նազլու.

Սաթենիկ, Սաթօ.  
Հայկանոյշ, Անուշ.  
Շուշանիկ, Շուշան.  
Մարգարիտ, Մարգիտ.  
Լուսիկ, Լուսօ.  
Շովինար, Շովիկ, Շովօ.  
IV Խուսական  
Կատինկա, Կատօ.  
Սօնիչկա, Սոփօ.

**ՄԵԽԱՆԻԿԱՆԻՔ.—ՄԱՐՏՈՒԹԻՒՆԻՑ յետոյ երեք օր շաբունակ երեխային չեն լողացնում և միենայն մեռող շորի մէջ են պահում, որպէսզի ըմեռոնը քաշայ ջան, ցած չզայյա, թէ չէ անմեռոն (անպատկառ) կը լինի:**

Երեք օրից յետոյ «մեխանից հանում են».—գտվիս են քահանան, տատմէրը և մանկաբարձները: Քահանան մի մաքուր ամանի մէջ լուանում է երեխայի այն մասերը, ուր մեռոն է քսուած: այս ջուրը լցնում են ջրհորը, կամ աղբը ակը, թոնիրը և կամ հողէ զնտեր են շաղախում, ու պահում, որ երբ մուկը կամ շունը մի ամանի գիպչելով պղծեն, այդ գունաը ջրի մէջ լուծելով լուանան դրանց և այսպիսով սրբն: Այս միենայն ջրով լուան են նաև տատմայրն ու մանկաբարձները, որ սրբուէ Սահմանից յետոյ տատմայրն ամրողջովին լողացնում է երեխային:

Այժմ հետզհետէ վերանում է մեռնից հանելու համար քանային հրահրելու սովորութիւնը: Նրա կատարելիքը տառմայրն է անում:

Քառասունիք.—Ծննդկանը բառասունիք է պահում թէ «գողնքից» (անկողնուց, առագաստից) և թէ «արեկից», այսինքն ծըննդեան օրից սկսած քառասուն օր շարունակ ոչ առագաստ է մտնում և ոչ էլ արեին երեսում: Նա տանից դուրս է գալիս միայն արեկի մայր մտնելուց յետոյ և գիշերները, և այն էլ ձեռին մի շամփուր կամ դաշոյն բռնած, որպէսզի չար ողիները նրան չմերձենան:

Երեխային ևս այս քառասունիքի ընթացքում արեին չեն ցոյց տալիս, գիշերները տանից դուրս հանելիս կրծքին մի կտոր հաց են դնում, և շէմքից անցնելիս «Յիսուս Քրիստոս» հն ասում, որպէսզի «չարերը հալածուին»:

Նաև ամբողջ քառասունիքի ընթացքում ծննդկանի մօտ գիշերցերեկ անշուշտ ճրագ են վառում, որպէսզի «չարերը չմտնան»:

Քառասունիքի ընթացքում եթէ մի մարդ է ներս մտնում, կամ ննջեցեալ են անցկացնում տան մօտից, կամ միս են բերում տուն, պէտք է անպատճառ երեխային իւր տեղիցը բարձրացնեն, այլապէս նա բառասութակոխ կամ «կոխ» կը լինի, այսինքն կ'սկսի հետզհետէ նիհարել և յետոյ, եթէ միջոցների չդիմեն, կը մեռնի:

Քառասունիքակոխ երեխային բժշկելու համար «կայծակի հետ երկնքից իջած երկաթից» շինուած «քաւկիրը» չորեքշարթամտի, ուրբթմտի և կիրակմտի երեկոներին բռնում են երեխայի զլիխն և ջուր ածում:

Նոյն նպատակով երեխային դնում են մի մաղի մէջ և փողցներում ման ածում:

Նաև գողանում են մի լաւաշ հաց այն տանից, որի բնակիչներից կոխուել է երեխան, ծակում այդ լաւաշը և երեխային միշից անցկացնում:

Կոխուած երեխային երեք օր յաջորդաբար ցանի (աթարի) հետ կշռում են, եթէ երեխայի քաշն աւելանում է, գուշակում են որ ապրելու է, իսկ եթէ պակասում է՝ ասել է՝ մեռնելու է:

Քառասունիքը լրանալիս ծննդկանը լողանում է, լողացնում երեխային և մկրտութեան կերոններն ու մի քանի մօս առած գընում է եկեղեցի:

Գուշով յօրինեներ երեխաների մասին.—Առջինեկ տղան ընդհանրապէս շնորհալի և միքանի առանձնայատկութիւնների տէր 3

է համարում. այսպէս զոլինջ (փորացաւ) և կարկուտ կարող է լինում: —Երեք անգամ խփում է փորացաւ ունեցող մարդու կամ անասունի փորին՝ ասելով. «Ես տեսայ շունը շանը միսը կերաւ»: որի ձեռք զոլինջին գեղ առ և փորացաւը կտրում է: Կարկուտ եկած միջոցին նա վիրցնում է մի հատ կարկուտ և զնելով տան շէմքի վրայ՝ գանակով կտրում է, և եկարկուտն էլ այդպէս կտըրում է, դադարում է:

Եթէ երեխան շապկով» (ձուի թաղանթով) է ծնուոմ, առ սում են, քաջերի սերնդից է, շատ քաջ և բաղդաւոր պիտի լինի: Եթէ ընկերքի աղիքը միքանի անգամ վաթաթուած է լինում նորածնի վիզը, ասում են. թէ այդքան անգամ նոյն այդ սերնից երեխայ պիտի ծնի նրա մայրը:

Ծննդեան և Զատկի գիշերը ծնուած տղաները և եղունգառող են լինում: Եթէ ծնողները չեն կամենում այդ՝ նրանց հղունդներին հինա են զնում, իսկ Եթէ կամենում են՝ մի գառն են մատղում և սրա թիակը երեխայի հետ մկրտութեան օրը տանում են եկեղեցի և ապա պահում, որ մեծանալիս նրա վրայ ևս նայէ: և գուշակութիւններ անի:

Մանկատաճութիւն: —Սովորաբար նորածնին առաջին անգամ գիշերը ծիծ չեն տալիս, այլ միշտ լուսարացին: Շատ անգամ էլ դիտմամբ ուզ են տալիս, որպէսզի նա ընկոտ լինի: Նախ մայրը կթում է ծիծը, որ վաս մասերը, գալը, անցնի, և այս անշուշուոչութեանց ներկայութեամբ. որովհետեւ այլապէս ծիծը կը ծակծակուի: Ցեսոյ տատմայրը ոսկի է բառում նորածնի բերանին, որ հարուստ լինի, կամ հաց զնում բերնին, որ զսմարով լինի, և կամ մեղը, շաբար քսում շրթունքներին՝ որ քաղցրախօս դառնայ:

Սովորաբար ծիծ են տալիս մինչև կրկին յղանալը կամ 1—3 տարի:

Կարը աւելացնելու համար ուժա են զնում Փաշաքեանդ գիւ: զի «կաթնազբիւրը» և նրա ջրով լուսանում ծծերը: Նաև հատիկ են անում ուտում, այսինքն ցորենը բովլում են և բիշմիշի հետ խառնելով ուտում Շատիկն այդ հատիկը տանում են Փաշաքեանդ և Կաթնազբիւրի ջրից վերան սրսկում և ապա ուտում:

Կաթը շատ եղած միջոցին կթում են մոխրի վրայ և լցնում թռնրի ակը:

Կաթը իբրև գեղ և գործ են ածում. այսպէս աղջիկ երեխայ ունեցողի կաթը կթում են ուսող (ձայն տուող) ականջի մէջ: աչ ծծինը ձախ ականջը, ձախինը՝ աջ, ասելով. «Յաւ քաղա, ցաւ քաղա», Նաև բամբակի վրայ կթելով դնում են ցաւող աչքի վրայ:

Մծից կարելիս ծծին քսում են «աւզա» (մի դառն դեղ է) կամ ծեռատ, ցեխու նաև բուրդ կամ ձկան գլուխ են դնում ծծի վրայ և վախեցնում երեխին ասելով. «վմյ վմյ, բորոն մտի ծոց», բորոն ծիծը տարեր առ: Մի հատ էլ ձու եփում են և տաք տաք դնում սառը ջրով լի կժի կանթին, որ հովանայ, և երեխային ասում են, որ գնայ վերցնի, որպէսզի «ինչպէս որ տաք ձուն է հովանում կժից, այնպէս և նա հովանայ ծծից»:

Երբ երեխան լալիս է և ծիծ ուզում ասում են.

Կթոց կոտրե

Կաթը թափե.

Այսինքն կովկիթը կոտրուել է և կաթը թափուել է:

Եթէ ծծից կարած երեխան մի առժամանակից յետոյ կրկին սկսի ծիծ ուզել, մեծանալիս նրա «աչքից սար ու քար կպատռի»: (սաստիկ չար աչք կունենայ):

Սակաւակաթթ մայրերը իրենց երեխաներին կերակրում են կովի կաթով, հետը խառնելով մի քիչ թէյ և նարաթ՝ կամ շաքար, իրը պտուկ (COCOK)՝ գործ էին դնում եզան եղջիւր՝ վերան կովի պտուկ՝ անցկացրած: Երեխային դրաղեցնելու համար մի շորի մէջ միքանի մանր կտոր շաքար և հաց են հաթաթում և դնում նրա բերանը՝ որ ծծի:

Երեխային լողացնում են մինչև քառասունքը՝ օրը միայն մէկ, երեքմի նաև երկու անգամ, իսկ քառասունքից յետոյ՝ օրամէջ<sup>1)</sup>: Նախքան քառասունքը լողացնում են հաւկթով, այսինքն հաւկիթը ջարդում են մի ամանի մէջ, մի քիչ ջուր աւելացնում և լոցնում երեխայի գլխին ու մարմին և ապա տաք ջրով լողացնում: Քառասունքից յետոյ հաւկթի փոխարէն սապոն են գործ աժում:

Մինչև քառասունքը լողացնելիս տաշտի մէջ երկաթէ կամ պողպատէ մի իր են ձգում, որպէսզի չար ոգիները չկարողանան մօտենալ:

Լողացնելիս յաճախ բռնում են երեխայի գլխից և բարձրացնում՝ տաշտից, նորից իջեցնում, որպէսզի վիզը երկարի. միանգամայն երգելով.

Յէրկնավղիկ,

Թափ տու ջրիկ,

Շալկայ մսիկ,

Զաղամաթի<sup>2)</sup> քունը քղիկ:

<sup>1)</sup> Ումանք ծնուած շաքաթի չորեցարթի, ուրբաթ և կիրակի օրերը չեն լողացնում՝ մեզք համարելով:

<sup>2)</sup> Աշխարհի:

Երեխային խանձարութելիս նրա տռակը տաքացրած հոգ են դնում, որպէսզի թէ առաջնի երեխային և թէ քաշի միզելուց յառաջացած թացութիւնը:

Նորածնին մօտաւորապէս մի շաբաթից յետոյ օրօնց են դնում. Առաջին անգամին տատմայրն է դնում և երեք անգամ շան պէս հաջում, «հմֆ, հմֆ, հմֆ» և այս այն նպատակով, որ երեխան մեծանալիս որքան էլ հաչեն վրան՝ չկարողանան կծել:

Եւ այս նախազգուշութեան համար տատմայրը ընծայ է ստանում:

Երեխայի եղունգները երկարելիս թաթախում են ալիւրի մէջ, որ իրենք իրենց կարուին:

Որպէսզի առամները հեշտութամբ դուրս գան և լստերքների բորբ դադարի՝ երեխայի ձեռքը կանաչ սոխ են տալիս՝ որ շարունակ ծամի՛, նաև ամէն օր լողացնում են:

Երբ երեւում են առաջին ատամները, «ատմախատիկ» են անում.—Եփում են ցորեն, կանեփ, ոսպ և սիսեռ, ապա որանց հետ խառնում չամիչ և պնդուկ (կաղին):

Հրաւաիրելով բարեկամ կանանց իրենց երեխաներով, օրուայ հերոսի զլուխը ծածկում են մի թաշկինակով և ատմահատիկը լցնում զլխին ասելով.

Ուրախութիւնով ատմահատիկ հնիդ.

Ուրախութիւնով ատամ խանես.

Բաղդաւոր հնես. հօրով մօրով հնես:

Այս միջոցին երեխայի առջև դնում են մի դանակ և մի սանը. Երբ վերցնում են երեխայի զլխից թաշկինակը՝ դիտում են, թէ նա նախ դանամին է վերցնում, թէ սանըը՝ եթէ դանակը վերցնի՝ գուշակում են, որ մօր յաջորդ որդին տղայ է լինելու, իսկ եթէ սանըը՝ աղջիկ:

Եթէ ատամները շատ շուտ հանեն, ասում են. «Աստուած խէր անա, մէկի զլուխը տան մէջ կուտայ»—անեցիներից մինը կմեանի:

Երբ առաջին անգամ քցում են ատամները, վերցնում ձգում են թոնրի ակն ասելով.

«Առ քե շան ատամ,

Տու ընծի գառի տատամ»:

Երեխայի մազերը առաջին տարուայ ընթացքում չեն խուզում, հաւատալով, որ կընիւանդանայ: Առաջին անգամ խուզելիս խուզողին նախ մի նուէք են տալիս. ապա խուզուած մազերը հաւաքում են և մի պատի ծակ խըռում, որ երեխայի զլուխը չցաւի:

Եթէ երեխան չի կարողանում բնել, դնում են նրան մի մա-

դի մէջ և տանում նախիրի առաջ բռնում ասելով. «Ձորէն ես գալում, բռն բեր իմ տղին»:

Եթէ երեխայի բերանից զուր է զնում կանչում են բաւրրին, որ ճկոյթը դնի նրա բերանը, զուրը դադարի դնալ:

Եթէ երեխայի բթից խլինք է գուլիս, ասում են. «Ելինքն էկե խելք ա բերէ»:

Վախեցած երեխային բժշկելու համար օրօրոցի կամարի և երեխայի գլխի, սրտի և ոտների վրայ խաչածե բամբակ են դնում. մի առ ժամանակ մալուց յետոյ հաւաքում են այդ բամբակը միասին և լուցկիով վառում. Եթէ մի անգամից վառուեց բոլորը՝ այդ նշանսկում է՝ որ այս միջոցը կօգնի և վախը շուտով կանցնի, իսկ եթէ բոլորը չվառուեց՝ այդ նշանսկում է, որ վախն ամրողովին չի անցնելու. այս պատճառով մինոյնը կրկնում են երեք անգամ. Մի անգամ ևս մինոյն տեղերում բամբակ դնելով՝ կրկն հաւաքում են և ջրի մէջ թաթախելով դնում երեխայի գըլմի տակ, և այդ ջրից մի քանի կաթ նրա բերանը կաթեցնում:

Որպէսզի երեխային ուսնը չկծի, տատմէրն ու երեխայի մայրը նստում են օրօրոցի երկու կողմը, տատմայրը օրօրոցի կամարի տակով տալիս է երեխային՝ մօրը և կամարի վրայով կըրկին վերցնում: Կրկնելով այս երեք անգամ տատմայրը հաջում է, և ասում. «Հմաֆ, հմաֆ, ես քեզ կծեմ, շները չկծեն»:

Որպէսզի երեխան ուսագնաց չլինի, «Քրալցնի», ծնողները տօն են պահում Թալիլիս բժշկի յունիս ամսին պատահող տօնը, որը և կոչւում է «Քրալալոց»:

Երեխան ուս լեզու ենելիս՝ 7 եկեղեցու բանալիներ են բը-սում բերանին:

Նաև տանում են տաւարի մուրքի առաջ կապում, և խոտ դէմ անում ասելով. «Թէ մարդ ես՝ խօսի, թէ տաւար ես՝ խոտ կէ»:

Երեխային չար աչիք պահելու համար կապոյտ ուրունքներ, օրօճիկ» (խխունչներ) և նարօտը կապում են օրօրոցից:

Աչքով տուողի շորից կտրում են և օրօրոցի տակ վառում, ապա երեխային աղօթել տալիս այդ շնորհը ունեցող պառաւներին:

Չար ողիներից ազատելու համար բարձի տակը հրանատ, հացի կտոր են դնում, գիշերը մօտը ճրագը շարունակ վառ են թողնում:

Երեխային վախեցնելիս ասում են.

Սուս արջամօրօօ (արջամուրուք) էկաւ.

Բօրոն էկաւ.

Բուղդալաւաշ, արի էս տղին տարու

Տէրտէրն էկաւ՝ յանկաջդ կը կտրաւ,

Երեխային ոտի վրայ կանգնեցնելիս ասում են.

**ԱՌ,**

Տոտի (ոտի) տակը վմբդ:

Կամ:

Մնի, մեր տմն, տմն:

Եւ կամ.

Մնի, մեր մաստանայ,

Բո մէրն ուտա քաստանայ:

Երեխային զրազեցնելու համար օրօրոցի կամարից կախ են պնում ողիկ—մի թելի անցկացրած խխունչներ (օրօճիկ) և վէգեր երբեմ այս թելի վրայ աւելացնում են նաև ուղունցներ, որոնք պահպանում են երեխային զանազան հիւանդութիւններից: Եթէ երեխան մի որեւէ մարմարական պակասութիւն է ունենում, վերագրում են ծնողների մեղքին. իսկ եթէ չար է լինում, վատ և անհանգիստ՝ համարում են չորեքմուտի, ուրբթմուտի կամ կիրակսամուտի մերձեցման արգասիք, որովհետև այդ օրերը մեղք է համարում առաջասա մանել:

Եթէ երեխան դեղնում է, ասել է նրա մօտ եկել է մինը՝ որ դեղին ուլունք է ունեցել մօտը, ուստի և բժշկելու համար նոյնպիսի դեղին ուլունքներ են կախում երեխայի վրայից:

Երեխան ձմրուկ (ՃՕՄՕՏԱ) հիւանդութիւնը ունենալիս մի բոքոն (կըր բաղարջ) են անխօս պանում շառաջի առաջ դնում և սա հասկանալով սրա նպատակը՝ վերցնում է մի կտոր կաշի, խաչաձև կտրում և տալիս բոքոն բերողին, որը և բերում կապում է երեխայի բազկին:

Երբ երեխան սկսում է նինարել, լողացնելիս ջրի մէջ մի կտոր միս են ձգում, որ երեխին միս բերի: Եւ կամ նոյն նպատակով մի չաղ կնոջ խնդրում են երեխայի գիլին ջուր ածէ:

Երբ երեխան սոէչպ ստէչպ հիւանդանում է, ասում են թէ Շնորուց է առելը, այսինքն լուսնի (նորի) ազդեցութեան է ենթարկուել: Բժշկելու համար երեխային տանում են ներկարարի խանութը, ուր ներկարարը երեխայի հետ բերած մոմերը խփում է կեղակի կարասի բերանին, վառում և աղալ երեխային բռնելով լեղակի կարասի վրայ՝ մատը թաթախում է լեղակի մէջ և քսում ճակատին, թթին, աչքերին: Այս աշխատութեան համար նրան մի հաւ են ընծայում:

Եթէ մի մօր երեխաները չեն ապրում, այլ հետզհետէ նիհարում են և մեռնում, այդպիսուն կոչում են օքըլպուտէն նրան բժշկելու նպատակով դիմում են, հետևեալ միջոցների:

ա. Նորածնի ականջի, գմակից փոքր ինչ կտրելով խորովում

են և լաւաշ հացի մէջ փաթաթած ուտեցնում են ծննդկանին, խափելով թէ գառան խորոված է:

բ. Յատկապէս շըջում են գետի ափը, որպէսզի տհանեն գորտ որսած օձ եւ երբ տեսնում են գորտը օձի բերանում՝ ասում են. «Դորո՞ն այսինչ թղպատի գեղն աչ» Յետոյ խփում են օձին և խլում նրանից գորտը, բերում տուն՝ չորացնում, եօթը բանկցրած ասեղ խրում վերան և եօթը գոյնի մետաքսէ թելերով կապուում և կապում թղպատի թևատակից: Ծննդաբերութիւնից յետոյ արձակում են այս և եօթը ճանապարհի մէջտեղ թաղում:

գ. Եօթը գոյնի տնբանեցնել մետաքսէ թել, խայաթի, ձըգում են մի կողպէքի կանթի վրայ և տալիս պատարագիչ քահանային, որ «աշխարհ զալիս», կողպէքը և թելը հանգուստէ: Թըգպառոտ կինը պահում է այս կողպէքը իւր մօտ մինչև ծնելը, երբ բաց են անում և թելերը այրում:

դ. Նորածնի ընկերքը թաղում են նրա ծնուած տեղում հետեւալ ձևականութիւնով.

ա. Ոմանք վերան անբանեցրած երեք ասեղ են խփում և մի պտյա՛ զնում, ասելով. «Աչք ետանց կտրես, էս ա քունք»:

բ. Ոմանք եօթը գոյնի թելերով թելած եօթը անբանեցրած ասեղ են խրում և զնում մի անբանեցրած կճունի մէջ, կարմիր խփով ժածկում և ապա թաղում:

գ. Ոմանք էլ մի տաքացրած ասեղով դաղում են նորածնի ոտները, մէջքը, ճակատը և ապա այդ ասեղը մի անբանեցնել մեխի և ընկերքի հետ զնում կճունի մէջ և թաղում:

դ. Նոյն նպատակով նորածնի հայրը կամ մի ուրիշ մօտիկ անձնաւորութիւն վերցնում է երկու ափու, մինի մէջ իրենց տանից սիքիչ ալիւր, միւսի մէջ միերիչ իւղ ածում և անխօս զնում եօթը անից «ալիւր ու իւղ մուրալու»: Ապա այդ իւղ ու ալրով մի մարդակերպ հաց են թիւում, որին կոչում են «կուկուռ». երեք որ՝ չորեքմատին, ուրբաթօտին և կիրակնածուին զնում են երեխայի բարձի տակ, որից յետոյ անխօսել տանում են թաղում գերեզմանատնում:

Թղպառ կանանց ազատուելուց յետոյ չեն թոյլ տալիս քնելու, թէ չէ սատանաները կը գան և նրա փայծաղը կը գողանան կը տանին և այն ժամանակ ծննդկանն ուշագնաց կը լինի, և երբ սատանաները այդ փայծաղը գետի ջրի մէջ թաթախեն՝ ծննդկանը կը մեռնի: Այս պատճառով էլ երբ ծննդկանը ուշագնաց է լինում՝ հրացանաներ են արձակում ուղղելով դէպի գետը, հաւատալով որ սատանաներն այդ ուղղութեամբ գնալիս կը լինին, հետեւապէս և կարող են վախեցնել և ստիպել յետ բերել փայծաղը»:

Ծննդկանի սաննուն (փորացաւ) կտրելու համար մկրտով շուրջ միրթում են:

Եոյն նպատակով մի բապում կամ տրեխ և մի գդալ դնում են մի ամանի մէջ և ծածկած տանում, առաջարկում ծննդկանին առելով. «Ել շուտով գոլաւ. (գդալով կեր) խս (այս) խսիծ»:

Ծննդկան եղած միջոցին եթէ տանը շունը կամ կտրուն ցկնին, ծննդկանը իւր երեխան վերցնում և գնում նրանց ձագերի վրայով անցնում է, որպէսզի իւր երեխայի ցցաւը այդ ձագերը տանին, թէ չէ, շունը կամ կատուն կը գան դէպի իրեն, և այս պիտօվ սրանց ձագերի ցցաւը իւր երեխան կը տանիւ—կը մեռնի:

Նաև եթէ մի յզի կին գայ ծննդկանի մօտ սրա երկունքի ժամանակ, նրա երկունքի ցաւն էլ կը փոխանցուի որպան:

### ՃՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԵՂԵՐ

Նոր-Բայազէտի գաւառում ևս գիւղացիների թէ առողջապահիկ դրութիւնը և թէ նրանց հայեացքը բժշկութեան վրայ միանդամայն նման լինելով միւս գաւառների հայ գիւղացիների դրութեան ու հայեացքին, ես աւելորդ եմ համարում կրկնել այստեղ ևս այն բոլորը, ինչ որ ասել եմ Գանձակի և Բորչարուի գաւառների ուսումնասիրութեան մէջ: Այս միայն կաւելացնեմ՝ որ գաւառը իւր քաղաքով ունի միմիայն երկու բժիշկ, որոնցից մինի բնակավայրն է Նոր-Բայազէտ քաղաքը, միւսինը Ներքին-Ախտան: Երկուն էլ չափազանց ծանրաբեռնուած են: Քաղաքում կայ մի բուժարան, ներկայ գաւառապես պ. Ս. Ղորդանեանի և զաւառական բժիշկ պ. Զաքարեանի նախաձեռնութեամբ բացուած: Մի բուժարան էլ Ն. Ախտայումն է: Պարզ է ուրեմն՝ որ ահազին ասպարէզ է թողած սափրիչներին, հեքիմ կանանց, սնդիներին, մանաւանդ բանիմաց պառաւներին, որոնց բժշկական գիտութիւնից առաջ ենք բերում հետեւեալ գեղերը<sup>1)</sup>:

Ականջազաւ. ա. Կաթեցնում են ականջի մէջ 1) օղի, 2) նաւթ, 3) ձիթենու տաքացրած լւղ, 4) աղջիկ երեխայ ունեցողի ծծի կաթը՝ եռացնելուց և փոքր ինչ հովացնելուց յետոյ, 5) եփած նռան հիւթը:

բ. Դնում են ականջի մէջ 1) սոխի ծիլը՝ ձիթի մէջ տապա:

<sup>1)</sup> Գանձակի գաւառ բ. հատոր եր. 84—88. Բորչարուի գաւառ. Ազգագրական Հանդէս Խ գիրք. եր. 151—157.

<sup>2)</sup> Նիւթեր հաւաքել է նաև պ. Վ. Պետրոսեան:

կելուց և փոքր ինչ հոգացնելուց յետ, 2) մեղրամոժից հաւի իւղից և կտաւատի ձէթից պատր ստած պատրոյց:

գ. Կապում են ականջին 1) խորոված խնձորը՝ նախապէս կիսելով; 2) բողկը և դդումը միասին եփելուց և փոքր ինչ հոգացնելուց յետ:

դ. Եթէ ականջը սանձու է տալիս՝ մեղր են լցնում ականջի մէջ և աղաջրի մէջ եռացրած փսիաթի կտորը վերան դնելով՝ թաշկինակով կապում են, մինչև որ մեղրը բերանից և պնչերից զայ թափուի:

ե. Որդնոտած ականջի մէջ կաթեցնում են 1) այծի լեղի, նախապէս ծիրանի դառն և ծեծած կորիզ խառնելով, 2) ծխածուրճի կեղաբ:

Ամլութեան դեմ.—Որոշելու համար թէ կինը պահպանել է «պաղելու» (յղանալու) յատկութիւնը՝ երկու օր շարունակ մի սիսեռ են պահում սեռական անդամի մէջ, եթէ այս ժամանակի ընթացքում սիսեռը ծլում է՝ այդ ապացոյց է՝ որ կինը պահպանել է յղանալու յատկութիւնը: Եւ որպէսզի նա պտղի, վերցնում են 3 մսխալ չոր գէրչակ, 1 մսխալ տաք և նոյնքան գեղին կոճ, մանրացնում, ոչխարի դմակով շաղախում և բամբակը սրս մէջ թաթախելով դնում կնոջ սեռական անդամի մէջ, և ութ օր շարունակ օրական մի անգամ փոխում, յուսալով, որ այսպիսով կը բացուի արգանդի բերանը:

Եթէ այս միջոցը չի օգնում, մի ամիս շարունակ օրական մի անգամ մի չոր, անծեծել գիտոր են դնում կնոջ անդամի մէջ, որպէսզի վատ հիւթերը ծծէ: Առողջացած է համարւում՝ երբ գիտորն այլ ևս չի փափկում, ուռչում:

7—8 տարուայ ամուլ կնոջը բժշկելու համար ըրուղ են տալիս, այսինքն մի կճճի մէջ լցնում են ոչխարի բշկուլ (կըտըսուր, դեք), և մի բաժակ ջուր, և բերանը խփով ծածկելուց և շուրջը խմորով պատելուց յետ իջեցնում են թոնիրը: Եւ երբ հի է գալիս հանում են, բերանը բաց անում, և կնոջը նստեցնում են վերան:

17—18 տարուայ ամուլ կնոջը բժշկելու համար դարձեալ ըրուղ են ապակիս, միայն քիշմիշով:—Յ Փունտ քիշմիշ և մի բաժակ ջուր ածում են մի կճճի մէջ, բերանը խփով փակում, խմորով պատում և երկու օր շարունակ թողնում հով թոնիրի մէջ: Ապա հանում են, բաց անում և անմիջապէս կնոջը մերկ նստեցնում վերան: Գոլորշու աղդեցութեամբ արգանդը մաքրում է: Այս փորձը կատարւում է միայն մի անգամ:

Ծառաւած արգանդն ուղղելու համար վերցնում են 2 փունտ

անհալ մեղք,  $\frac{1}{2}$  գ. տաք և նոյնքան դեղին կոճ, կրիայի երկու ձու, միասին շաղախում, և ութ օրուայ ընթացքում, օրական երկու անգամ մի մի թիչ բամբակով գնում անդամի մէջ, Ասում են, թէ այդ բաղադրութիւնը ձգողական զօրութիւն ունի. և ծռուած արգանդը ձգում, իւր տեղն է քցում:

Որոշելու համար թէ ամլութիւնը ամուսնուց է թէ կնոջց՝ մի հաւկիթ են զնում կնոջ սեռական անդամի մէջ, և երկու օրից յետոյ հանում, կոտրում են և զնում. եթէ արիւն է քաշել իւր մէջ ամլութիւնն ամուսնուց է, իսկ եթէ անարատ է մնացել՝ կնոջց:

Ամրութեան դեմ. — Խմացնում են 1) կովի հալած իւղ. 2) սինամաքի կոչուած բոյսից պատրաստած թէյ, 3) գոմէջի կաթ՝ աւելուկի սերմ խառնած. 4) էրնջուկ բոյսի ծեծած արմատից պատրաստուած թէյ:

բ. Լողացնում են.

գ. Մի կաթսայի մէջ գարի են եփում, բերանին շոր քաշում և տկարին մերկ նստեցնում վերան:

Այրուած. — ա. Բառում են 1) թանաք, 2) խլինք, 3) կժի տակի ցեխ, 4) ձեթի փրփուր:

բ. Կաթի սեր, ալիւր և հաւկթի դեղնուց շաղախում են, հացի նման թխում, չորացնում և յետոյ փոշիացնում և ածում այրուածի վրայ՝ նախապէս սեր քսելով:

գ. Լորին այրում են և փոշիացնելով ցանում վէրբի վրայ:

դ. Փթած փայտը տրօրում են և վրան ցանում:

Աչացաւ. — ա. Ռուած աչքին զնում են սպիտակ թոք, որ արիւնը քաշի:

բ. Ծիր մէջ են նստում, որովհետև արտասուելը առողջաբար է:

գ. Օղի են կաթեցնում աչքի մէջ:

դ. Չմեր, այսինքն ձեան ազդեցութիւնից ցաւող աչքերի վրայ տրեխի կտոր են զնում նախապէս ջրի մէջ փափկացնելով:

Ատամնացաւ. — ա. Ատամի վրայ զնում են 1) աղ, 2) մեշիսակ, 3) բամբակ՝ օղիում թաթախած, 4) այրած սպիտակ շիրի փոշին, 5) ձիթով շաղախած և եփ տուած ալիւր (մուրթուշա):

բ. Դաղում են գուլպի տաքացրած ճաղով:

գ. Խնկի մուխ են տալիս:

դ. Խունկը օղու մէջ կակղացնելով զնում են ատամին:

ե. Ապակու կտորը կրակի մէջ ձգելով սաստիկ եռացնում են, ապա ձգում քացախի մէջ և ալսպիսով հալեցնում, ապա բամբակը թռչում են սրա մէջ և զնում ցաւող ատամի վրայ:

գ. Կարմիր պղպեղն եփում են, ջուրը քամում և բաժբակը թռչելով նրա մէջ՝ դնում ատամի վրայ:

է. Ուրցից պատրաստած օղիով ողողում են բերանը:

Արբեցողուրեան դեմ—Արբեցողի կինը իւր մէզից խմացնում է ամուսնուն, առանց նրա գիտութեան:

Արիւն կորել—(վէրքից հոսող արիւնը՝ դադարեցնել հոսելուց). ա. 1) Վէրքի վրայ դնում են բամբակ, 2) սարդի սատայն, 3) ծնծած շաքար, 4) այրած բուրդ:

բ. Դաղում են երակը:

գ. Կտրուած տեղին դնում են 1) իշխ թրիք, 2) մանրացրած շիպ և 3) յարէթ:

Բկացաւ.—ա. Բերանը բացախով ողողում են:

բ. Լիմոնի աղ են բսում բկին՝ ներփուսու:

գ. Փիփերտ կամ հաց ու պանիր կոչուած բոյսը կաթով եփում են և կապում բկին:

դ. Կաւատացը ծեծում են և ձիթով ու կաթով եփում, շինում շոլայ, բաշում բկին:

Դիսացաւ—ա. Տարացրած աղ են դնում գլխին:

բ. Քլուխ սոխը կիսում են և կապում ճակատին:

գ. Կաթ, իւղ և փոքր ինչ շաքար միասին եփ են տալիս և ապա հովացնելով խմում են:

դ. Տաք կոճը տրորում են օղիի մէջ և գլխին քսում:

ե. Հաւասարաշափ իւղ և մեղք հալելով միասին՝ տաք տաք խմում են:

գ. Նաւթով հունձում են ալիւրը և երկու ժամ պահում գաղաթին:

է. Տաւարի ուղեղը օղիով շաղախում են և կապում գլխին:

ը. Մանածը (թել) փաթաթում են գլխի բոլորը և չորս տեղից ամբացնում:

թ. Մեխակ, մեղք, հինայ, տաք—կոճ, կինամոն, պղպեղը միասին շաղախում են և կապում նախապէս ածելած գլխին և այսպէս պահում 3 օր շարունակ:

Գորենուկ.—ա. Լուսնի նորին մատը դնում են գորտնուկի վրայ և եօթն անգամ ասում.

Թազա նորը նորեր ա,

Նորի կտոր կորեր ա.

Խմ աղբերը գթեր ա,

Պատի տակը տափեր ա:

ը. Վառվառէ կուսի կամ մի այլ սրբի մատրան տակ մի ձու են թաղում ասելով.

Զուն էս տեղ փջի,

Դորտնուկն էլ էս տեղ փջի:

Այս միևնոյն անէծքը կրկնելով, միայն ձռի փոխարէն թաղուած իրի անունը տալով 1) մօի կտոր են թաղում գետի ափին,  
2) 7 գարի են թաղում թոնրի շրթի մօս:

գ. Օձի շապկից մի կտոր դնում են հացի մէջ և ուտեցնում գորտնուկ ունեցողին, առանց նրա գիտութեան:

Դոդ.—ա. Մի ծեծած սխտոր կապում են թէին, միբանի օրից կապուած տեղը ուռչում է և ջրակալում. ծակում են և ջուրը թափում:

բ. Ուտեցնում են 1) քացախով սխտոր, 2) շէն տնից խընդրած հաց ու պանիր, 3) թանէ սպաս, 4) հում ձռւ՝ հարելով օղու մէջ:

գ. Վախեցնում են՝ վատ լուր հազորդելով կամ սարսեցնում սառը ջուր ածելով վրան կամ հանդերձի քաղանցքը վառելով:

դ. Մանր քար են շալակել տալիս և ման ածում:

Թոքայս.—Խմում են 1) եփուած աւելուկի ջուրը, 2) կովի նոր կթած կաթ, առանց թոյլ տայու՝ որ կթելուց յիշոյ գետին դրուի:

Խոյնի դեմ.—Խմում են 1) կաթ, 2) մածուն:

Թուների բորբոխամ. (սաթլջամ).—ա. Արիւն են առնում և լողացնում, արգելելով կծու և թթու բաներ ուտել:

բ. Բօօօ կոչուած՝ ծաղիկը եռացնում են և թէյի պէս խմում: Լուծելու դեմ.—ա. Քամած մածնի մէջ ծեծած շիր են ձգում և կապում փորին 2—3 ժամ, կրկնելով 3—4 անգամ:

բ. Ուտում են եփած աւելուկ, փշատ, աղանձ (տապակած ցորեն):

գ. Նստում են թոնրի կամ տաքացրած աղիւսի վրայ:

դ. Լողացնում են երեխային՝ նախապէս ջրի մէջ նոր հասած վարունգ ձգելով:

Խարբուխ.—ա. Մօր փոխանը փաթաթում են գլխին և այն պէս քնում:

բ. Խնչում են մի կտոր շորի մէջ և ձգում ճանապարհի վրայ, որ մի ուրիշը վերցնի և այսպիսով ցաւը փոխանցուի նրան: Նոյն արածրանութեամբ մօտենում են մէկին ծածկաբար և յանկարծ նրա գլուխը կծում՝ ասելով. Օդս վրէդ, իսկ սա եթէ գիտակ է՝ պատասխանում է. Զաղցից եմ գալում՝ գլոխա ալուս է, այսպիսով թոյլ չի տալիս, որ խարբուխը իրեն անցնի:

գ. Կապոյտ կտորը այրում են և ծուխը քթին տալիս:

Խումբա ա. երբ երեսը կապտում և ուռչում է՝ խումբա է լինում, իշխանական արիւն են քսում:

բ. Կենդանի գորտ են կապում երեսի վրայ:

կողքացաւ.—ա. Կողքին զնում են շորերի մէջ փաթաթուած

1) տաքացրած աղիւա, 2) խուփ, 3) աղ:

բ. Եախու են կապում, պատրաստելով այսպէս. խունկն ու քաֆրին (կամփօրա) օղու մէջ լուծում են և սրա մէջ կապոյտ թուղթը թրջելով կապում կողքին: Կամ եղան լեղի, խունկ, մեղքը և քաֆրի միասին եփում են և սրա մէջ թրջում կապոյտ թուղթը:

Կորուած ոսկեր.—ա. Եախու են կապում պատրաստելով այսպէս. տուխտը, ձուի գեղնուցը, աղը, օղին միասին խառնելով շաղացում են և շորի վրայ քսելով կապում կոտրուած տեղի վըրայ. Ութը օր շարունակ օրը մէկ անգամ փոխում են:

Հազի դէմ. ա. Ունարը կաթով եփում են և խմում:

բ. Գինի են եռացնում, խմում:

գ. Խոճորի մէջ խունկ լցնում, խորովում, ուտում են:

դ. Խւզով տապակած սխտոր են ուտում:

ե. Գլուխ սոխը կրակի մէջ թաղելով եփում են և ուտում:

դ. Հում հաւկիթ են խմում:

է. Տաք ջրով լողանալիս սառոյցի կտորներ են կուլ տալիս:

ը. Մեղքը են ուտում:

թ. Զիու, իշխ կաթ են խմում անօթուց:

ժ. Ուները սառը ջրի մէջ են դնում:

ժա. Կրծքին այծի կամ խոզի ճարպ են քսում:

ժբ. «Հաւախոռ» կոչուած բոյսով, կամ սկ պղպեղով թէյ

են պատրաստում, խմում:

Զայնը կտրուելու դէմ.—ա. Խունկ են ծամում:

բ. Հում հաւկիթ են ուտում:

գ. Խորոված սոխ են ուտում:

դ. Տաք կաթ են խմում:

ե. Բուրդ են դնում կրծքին և թիկունքին:

Զեռքի նակնեց.—Զիթապտղի իւղը և այծի ճրագուն միասին խառնելով քսում են ձեռքերին:

բ. Ոչխարի գմակ, նաւթ են քսում:

գ. Մեղրամոմը ձիթով եփում են և քսում ձեռքերին:

Մազեր երկարացնելու նաևա. ա. Եաւշան կոչուած բոյսը կաթով եփում են և մազերին քսում, հետեւել օրը լուանքում:

թ. Զողանով լուանում են:

զ. Մսի ճիլ են ուտում:

գ. Գարնանը՝ կենդանիների կուն (թրիք) են քսում մազերին։  
Մաղսի դեմ (յօլուն).—Եշի կաթնուկ կոչուած բոյսի հիւթը  
քամում են և մի մատնոցաչափ ածում մի բաժակ կաթի մէջ՝  
խմում։

Մատնաօւնչ.—Մատի ծայրն ուռչում է և ցաւում ա. կա-  
պում են ծեծած սխտոր։

բ. Կապոյս թել են անցկացնում ուռած տեղի միջով։

գ. 1) Ծեծած խուրմա, 2) շաքարով հունցած խոնք, 3) միա-  
սին շաղախած հաւկիթ, ալիւր, և շաքար 4) ձիթով եփած սոխ  
են զնում մատին։

դ. Այծի լեզու մէջ են դնում մատը Յ—Գ ժամ։

ե. Կովի պնչի մէջ են կոխում մատը։

Մեջացաւ.—ա. Մէջքին պուլիկ (բանկա) են քցում, այսինքն  
մի կտոր թուղթ են վառում պուլիկի մէջ և բերնքսվայր ամրա-  
ցնում մէջքին։

բ. Եախու են քցում, Եախուն լինում է կամ ձէթով եփ  
տուած ծամոն, կամ օղի, քաֆրի և մանրած խունկ։ Եախուն  
դնում են թղթի վրայ քսած և անփոխել պահում են 8 օր։

գ. Մէջքը մերսում են (մասսած են անում)։

Մկնատան. —ա. Ալաքլունդ կոչուած միջատը չորացնում են,  
փոշիացնում, կաթի սերով շաղախում և քսում մկնատամի վրայ։

բ. Բընձից իւղ են հանում և քսում։

գ. Ուռենու ճիւղերի հիւթն են քսում։

դ. Շաքարի թուղթը վառում են, բաժակը բռնում ծխի վրայ  
և ստացուած մուրը քսում մկնատամին։

ե. Առաւօտը ատամի կեղտ են քսում։

Մոլոր. —ա. Մառը ջրով լողանում են և մազուտ շաղիկ  
հազնում։

բ. Փաթաթւում են ջեջիմի մէջ և մի չորեքմուտք, ուրբը-  
մուտք և կիրակմուտք գիշեր ծածկաբար գնում թաւալւում մի  
այնպիսի տան կտրան, որի տէրը երեք անգամ է ամուսնացել։

Մասածի. —ա. Ցաք ջրով լողացնում են և տաք անկողնում  
պարկեցնելով քրանեցնում։

բ. Պղպեղով և կինամոնով պատրաստած թէյ, կամ պղպե-  
ղով օղի են խմացնում։

գ. Լուծողական են տալիս։

դ. Մըսելուց կամ տենդից ուռած փորը բժշկելու համար իշի  
կաթնուկ բոյսի հիւթից միքիչ ածում են կաթի մէջ և խմեցնում։

Մրկութեան դեմ. —Ուռի կամ կաղամբի տերեններով ծած-

կրւմ են մերկ մարմինն ամբողջապէս՝ տաք անկողնի մէջ պառկեցնելով։ Հիւանդը նախ սոսկում է և ապա սաստիկ քրտնում։

Յօդացաւի դեմ.—Այս հիւանդութիւնը գաւառում չափազանց տարածուած է՝ բնակարանների խոնաւութեան պատճառով և կոչում է բալի։—ա. Շահնային որդեր ածելով համաշափ օղու մէջ 40 օր պահում են, մինչև որ որդերը լուծում են. ապա սրանով շփում են քամոտ տեղերը։

բ. Կարմիր պղպեղը չորացնում, մանրում են և օղու մէջ ածելով քսում են մարմին։ և կախուում հով թռնիրը։

գ. Գարնանը եղինջով ծեծում են մերկ մարմինը։

դ. Թամոտ տեղի մի կէտի վրայ սնկան ծաղիկ են դնում, որ վէրք գոյացնէ և շարաւ քաշէ։ Վէրքը փակելու համար քսում են կաթի սեր և անալի կարագ։

Եան կծածի. —ա. Լորին կիսում և դնում են կծած տեղի վրայ։

բ. Նաւթով հունցում են ալիւրը և կապում վէրքի վրայ և կամ ուղղակի նաւթ քսում։

գ. Սպիտակ շիրը կաթով եռացնում են և քսում վէրքին։

դ. Կծող շան մազը իւր տիրոջ խմորի հետ շաղախելով դընում են վէրքի վրայ։

Եփանց լինել. (յարք) —ա. Օշարակ են խմում։

բ. Դիլիին տաք ջուր են ածում։

գ. Ճակատին սոխ են կապում։

Կատաղած շան կծածի դեմ. —ա. Եանը սպանում են, մէջ տեղից կիսում և կծուածին բերում դիակի մէջ տեղով անցկացնում։ բ. Կէմով (ջով, խոտէ թոկ) կապում են մէջքը և տանում էջմիածնի գաւառի Փարպի գիւղը՝ ուխտ։

գ. Զեն թոյլ աշլիս կծուած օրը մինչև լոյս քնի։

դ. Վայրի մեղուն սպանում են, տրորում, գարու ալիւրի մէջ շաղախում, մի դնդակ շինում և կուլ տալիս։

ե. Եթէ նկատում են, որ ազատուելու չէ՝ տանջանքը կարձելու նպատակով հերթիկոց մոխիր են մաղում վերան, որ շուտով խեղդուի։

Օձի կծածի դեմ. —ա. Կծած տեղից փոքր ինչ բարձր կապում են, որ թոյնը չտարածուի, Եետոյ կենդանի հաւի յետոյքը դնում են կծած տեղին։ Հաւը սատակում է, ուրիշն են դնում, մինչև որ այլևս չեն սատակում։

բ. Կծուած տեղին թթու մածուն են քսում։

գ. Գիւտինը փորում են և կծուած տեղը 5—6 ժամ թաղում այդտեղ։

դ. Ածելիով կծուած տեղը կտրատում են (չրատում), արիւն է գալիս, ապա թանով կամ մածունով լուանում են:

Եթև աշբը ուղղելու համար ջրաղացի պատող քարի վրայ գընում են հօթը ճիւղ ունեցող մի վառուած ճրագ և շի աչք ունեցողին աչքերը կապած մօտեցնելուց յետ՝ յանկարծ բաց են անում: Ուռած ձձին.—ա. Տզրուկ են կապնում:

բ. Հաց ու պանիրը եփում են կաթով և ձձի վրայ կապում:

գ. Սառն աւազ են դնում ձձի վրայ:

Ուռացուց (ՅՈՎԱԿԱ, Ջրգողութիւն).—Խմացնում են 1) եղան լեզու կոչուող բոյսից պատրաստուած թէյ, 2) կաթ՝ կաթեցնելով մէջը իշի՝ կաթնուկ կոչուած բոյսի հիւթից 9 կաթիլ՝ իւրաքանչիւր բաժակին:

Զարդուած (յանեն).—Զիսուած տեղի վրայ կապում են մի նոր մորթած հաւ, նախապէս ջախջախնով:

բ. Նոր մորթած ոչխարի մորթին տաք տաք փաթաթում են ջարդուած տեղին:

գ. Խնկով, օղիով և քափրով եախու են պատրաստում—միասին շաղախում—և կապում ջարդուած տեղի վրայ:

Մրացաւ.—Ռւրցից պատրաստած օղի են խմում անօթուց:

Վախեցածին. —ա. Վախենալուն պէս միզում են և մի ափ խմում:

բ. Դեռ ևս լուսը չբացուած, լուելեան մի ամանով ջուր են տանում դռնէ դուռ ման ածում և հօթը տան գութանի շղթայ մէջը թրջում:

գ. Մի չորեքմտի, կամ ուրբաթմտի և կամ կիրակմտի երեկոյ վախեցածին լուելեան տանում են ոչ բնական մանով մեռած կամ մի թուրքի գերեզմանի վրայ, ձեռքերն ու ոտները իրենց հետ վերցրած ջրով լուանում և ջրի ամանը, որ սովորաբար խեցի է լինում, կոտրում են նոյն գերեզմանի վրայ և յետ դառնում:

դ. Վախ բռնող կանանց վախոր բռնել են տալիս:

Տեռասեսութես ն դեմ. —Ռւզտի մէզ են խմում:

Ցրի տարածի. —ա. Գետինը փորում են, ձեռքերն ու ոտները մէջը դնում, հողով ծածկում և ձէթ ածում վերան:

բ. Պառկեցնում են գոմէշի տաք թրիքի մէջ:

գ. Հինայ են քսում ցրտի տարած տեղին:

դ. Բողէլ փորում են, ձէթ լցնում, եփում և կապում ցրտի տարած տեղին:

Ցրից ուռած վերք. —ա. Կտաւատը կաթով շաղախում են, թխում, և տաք—տաք կապում վէրբի վրայ:

բ. Փիփերար և սոխը միասին եփում են և կապում վէրքի վրայ:

գ. Նոյն կերպ դնում են կաթով եփած աւելուկ, որ «պիլիստառ» է կոչում:

Փորացաւ. ա. Հաց ու պանիր կոչուած բոյսը կաթով ու սոխով եփում են և տաք տաք կապում փորին:

բ. Նոյն կերպ գործադրում են կտաւատը՝ կաթով եփելով:

գ. Նստեցնում են տաք սալի, աղիւսի կամ թոնրի շրթի վրայ:

դ. Աւելուկը եփում են և ջուրը խմում:

Քարի խփելուց յառաջացած վերք.—Խանձուր են անում, այսինքն մի կապոյտ կտոր խանձում են, լցնում ձէթի մէջ և մէ շորի վրայ քսելով կապում վէրքին:

### ՄԱՀ, ԹԱՂՈՒՄՆ ԵՒ ՄԵՌԵԼՈՅ<sup>1)</sup>

Նոր-Բայազէտի ժողովուրդն էլ խոր հաւատում է ճակատագրին, այս պատճառով և՛ ոչ այնքան բժշկութեան, որքան սըբերի միջամտութեան և կախարդութեան են դիմում՝ օրհասը փոքրինչ յետաձգելու Այսպէս՝ խնդրում են բահանային՝ որ Հաղարափրէլի կամ մի այլ մասունք բերի հիւանդին համբուրել տալու կամ բժշկութեան աւետարան կարդայ նրա գլխին և կամ եկեղեցում, ժամանացութիւնից յետոյ ծանուցում անէ՝ նրա ծանր հիւանդութեան մասին և խնդրէ ժամուռըներին «Տէր ողորմեած ասել, նրա համար բժշկութիւն հայցել, երբ այս միջոցները չեն օգնում, պառկեցնում են հիւանդին մի սայլի վրայ և մի ոչխար առած գնում ժօտակայ զօրաւոր սրբերից մինի դուռը, մատաղ անելու և բժշկութիւն հայցելու, նրա հանդերձից մի կտոր կտրում են և կտապում սուրբ համարուած ծառի ճիւղերից, որպէսզի նրա հիւանդութիւնը այգտեղ կապուած մնայ և կամ նրա շապիկը հանում տալիս են մի աղբատի, որպէսզի այսպիսով նրա հիւանդութիւնը սրան փոխազբուր:

Թէ քաղաքում և թէ գիւղերում կան միքանի տիրացուներ ու քահանաներ՝ որոնք «գիր են անում», և անձար հիւանդներին առողջացնելու:

Հիւանդութեան ժամանակ թէ հիւանդը և թէ նրա շրջապատողները շատ սնոտիապաշտ են դառնում, և աշխատում են ամէն մի բանից գուշակութիւն անել. այսպէս՝ եթէ բուն բուայ

<sup>1)</sup> Բացի ինձնից իմ ինսդրով նիւթիր հաւաքեց այս մասին նաև պ. Ռ. Աղատեանը:

կամ ագուաւը կռոայ հիւանդի տան մօտ, հաւն աքաղաղի պէս կանչէ, այս նշան է որ հիւանդը մեռնելու է. եթէ նա, հիւանդը, յաճախ տեղը փոխէ՝ նշանակում է որ մահուան հրեշտակը նրան երևում է, եթէ երազում ննջեցեալներից տեսնի, կամ զառանցանքի մէջ ննջեցեալի անուն տայ՝ նշանակում է՝ որ ննջեցեալները նրան կանչում են: եթէ շարունակ նա պճխում է քիթը՝ այդ նշանակում է, որ հոգին գուրս է գալու:

Գուշակելու համար թէ հիւանդն առողջանալու է թէ ոչ՝ մի ամանով ջուր են տալիս նրան խմելու, և մեացած ջուրը սրսկում մի որևէ կենդանու, յաճախ շան վրայ. եթէ սա սոսկում է, գողում, այդ նշանակում է, որ հիւանդը մեռնելու է:

Երբ հիւանդը ցանկութիւն է յայտնում տեսնելու մի որևէ սիրելի անձնաւորութեան, նրան անմիջապէս կանչում են, և եթէ նա հեռու լինելով չի կարող համսել՝ նրա հագուստից մի որևէ բան թերում ձգում են սրա երեսին, որպէսզի «կարօտը առնէ» և հանգիստ մեռնի:

Երբ մօտենում է հոգեվարքը՝ հրաւիրում են քահանային, որ նրան սրբութիւն տայ, որպէսզի նա «անօրէնք չմեռնի»:

Երբեմն՝ կամնալով յետաձգել մահուան բովէն՝ սաստիկ աղուուկ են բարձրացնում, հրացան արձակում, որպէսզի «հոգեգարձ» լինի: Այսպիսին երեք կամ եօթը օր գարձեալ ապրում է:

Եթէ հիւանդը հեշտութեամբ է հոգին աւանդում, ասում են արդար է եղել, իսկ եթէ երկար չարչարուելուց յետ՝ մեղաւոր:

Արդար մարդու հոգին առնում է Գարբիէլ հրեշտակը, հրեղէն սուրը ձեռին բռնած և մի վարդ տալով հիւանդին, իսկ մեղաւոր մարդու հոգին առնում է չար հրեշտակը՝ «գրողի գզրի» ուղեկցութեամբ: «Գրողի գզրը» մի չար պառաւ է լինում, որ ուղեկցում է «գրողին», այդ չար հրեշտակին՝ և ցոյց տալիս հիւանդների աները: Մօտենալով հիւանդին՝ չար հրեշտակը երկաթէ տաքացած շշի մի հարուածով հանում է հիւանդի արիւնթաթաղ հոգին և վարդի փոխարէն՝ փուշարէն՝ տալով նրա ձեռքը՝ հեռանում:

Մի 86 տարեկան պառաւ կին պատմում էր, թէ ինքը տեսել է իւր ամուսնու հոգեառ հրեշտակին, բարձրահասակ ու արեգակնափայլ. նրա ճառագայթներն ուղիղ իւր աչքերին են ընկել, ուստի և չի կարողացել երկար նայել. ծածկել է աչքերը և երբ միքանի բովէից յետոյ բացել՝ ամուսնուն արդէն մեռած է գտել: Նոյն պառաւը տեսել է նաև իւր սկեսրոջ հոգեառ հրեշտակին, սակայն սա մարդակերպ չէ եղել, այլ մի գունտ վառ կրակի:

Հոգին աւտաղելուց յետոյ՝ մօտիկները թափւում են վերան, համբուլում և բարձրաձայն լալիս:

Եթէ մեռնողի աշքերը բաց են մնացել, ասում են թէ աշխարհից դեռ չէ կշտացել, և աշխատում են փակել: Ջեռքերը խաչաձեւ զնում են կրծքին և վերժակով ծածկում: Անմիջապէս խունկ ծխում:

Եթէ մահը գիշերն է պատահում, տնեցիները այլ ևս չեն քնում և նոյն իսկ քնածներին էլ վեր են հանում, որպէսզի երեսակալոյն չլինեն:

Կարելոյն չոփ վազ հրաւիրում է քահանան ննջեցեալի վըրայ հոգոց ասելու. որից յետոյ հանում են ննջեցեալի շորերը. ոտները ուղղում, մի թելով նրա հասակը չափում, որ նրա համեմատ դագաղ պատուիրեն, որովհետև հաւատում են, որ եթէ դագաղը փոքր ինչ մեծ լինի՝ տնեցիներից շուտով մի ուրիշն էլ կը մեռնի:

Ընդհանրապէս զգուշանում են կենդանի մարդկանց հասակը միորեւէ չափով և մանաւանդ՝ թելով չափել, որովհետև սովորաբար միայն դագաղ պատուիրելու ժամանակ են չափում:

Սրահում կամ մի սենեակում, որի յատակը տախտակած չէ, մի փոս են փորում, կողքերին երկու քար դնում և սրանց վրայ մի լայն տախտակ ձգում: Ապա առանց մի որեւէ ձևականութեան, որ ընդունուած է ուրիշ գաւառներում, մի կաթսայ մաքուր սառըն ջուր բերում: դնում են փոսի մօտ և հրաւիրում քահանային՝ օրհնելու: Այս ծէսը կատարելուց յետոյ՝ ննջեցեալին՝ եթէ տղամարդ է՝ ժամանարը կամ ուրիշ տղամարդիկ, իսկ եթէ կին՝ պառաւ կանայք լողացնում են: Աւելացած ջրով լուանում են իրենց ձեռքերն ուրիշ տան մէջ գտնուող բոլոր կանայք, որպէսզի աշխարհի «ցաւ ու չոռից» ազատուեն: Միևնոյնն անում են նաև «հրեշտակակոյն» եղածները—այսինքն հանգուցեալի հոգի աւանդած միջոցին՝ քնուծ եղողները, որպէսզի ազատուեն հիւանդութիւնից:

Փոսը՝ որի մէջ թափւում էր ննջեցեալի վերան ածած ջուրը՝ հողով լցնում են, և վերան եօթն օր շարունակ ձիթի ճրագ վառում, որովհետև հաւատում են, որ հրեշտակն եօթն օր շարունակ այդ փոսի վրայ կանգնած՝ պահապանի դեր է կատարելու:

Լողացնելուց յետոյ ննջեցեալին տանում են մի առանձին սենեակ, և հասարակ կտաւով պատնքում:—մի պարկ կարում՝ անցնում վերան և միայն երեսի տեղը բաց թողնում: Քահանան պատանքի աւելացած կտորից՝ որ «ըլլըկ» է կոչում մի գոտի և մի խաչած վարչամակ է պատրաստում և իւր ձեռքով գոտին կապում ննջեցեալի մէջբին՝ ու վարչամակը դնում երեսին:

Պատանքի աւելացած կաորը միքանի օր հայտառն սիւներից մինի վրայ բաշ անելուց յետոյ տալիս են ննջեցեալին լուղացնողներին:

Պատանքած ննջեցեալին գիւղերում փաթաթում են մի կըտորի մէջ և զնում հասարակաց նաժի մէջ, իսկ քաղաքում, դագաղի մէջ և «Երեսքառով», ովառով՝ ծածկում: Երեխայի երեսքաշը լինում է մի գունաւոր թաշկինակ, աղքատ մարդկանցը՝ միքանի արշին չիթ, իսկ հարուստներինը մետաքսի կամ թաւիչի գունաւոր կտոր: Այս երեսքաշը թաղելիս վերցնում են և ուղարկում քահանային՝ իբր նուէր, որից շատ անգամ նա շուրջառ է կարել տալիս իւր համար:

Դագաղը շինում են հասարակ տախտակներից և ներքուստ սպիտակ միտկալով պատում, իսկ արտաքուստ՝ եթէ երեխայի կամ երիտասարդի համար է՝ կանաչագոյն, եթէ միջահասակի՝ կարմիր, իսկ եթէ ծերի՝ սև գոյնի կտորով ծածկում ու նեղ ժապաւէններով զարդարում:

Թարմ ծաղիկներով դագաղը զարդարելը կայ թէ քաղաքում և թէ գիւղերում:

Քաղաքում հարուստները ննջեցեալին, հանդերձ են հազըրնում, ընտրելով նրա հանգերձներից ամենալաւը, մնացած հանդերձները երեք օրից յետոյ լոււանում են՝ ու տալիս՝ փոխանն ու շապիկը ժամհարին կամ ննջեցեալին լողացնող կնոջ, իսկ միւսները՝ քահանային: Այս տուրքը կոչւում է «կողոպաւտ»:

Հետզհետէ բարեկամ և ազգական կանայք խմբում են նընշեցեալի տունը և երբ դագաղը գնում են սենեակի մէջտեղը երեսը դէպի արևելը դարձրած ու ուսների ու գլխի մօտ կերոններ կամ մուեր վառում, տնեցիները շրջապատում են ու սկսում ողբալ: Թէ գիւղերում և թէ քաղաքում կան յայնի «գովք» ասող կանայք, որոնք նստում են ննջեցեալի սնարի մօտ, լալիս և բարձրաձայն ողբեր կամ «գովք» ասում: Միւս կանայք կասարեալ լոււթեամբ լսում են ողբը և երբ մի տիւնը աւարտում է՝ խմբովին «վմյ վմյ» են անում և լալիս:

Ահա միքանի «գովքեր»:

Ամուսնու վրայ

Ախ իմ գլխաւոր ջան,  
Մենծ տանուտէր ջան,  
Մանտը բալէրի տէր ջան,  
Տուն հարի տուն, արկիդ դուրբան:

Զարսու բազարիդ դուրբան,  
Գալած ճամրէրիդ դուրբան,

Մեռնիու էդ չինարի բոյիդ,  
Որ հիմա գարցել ա մէյիդ (դիսկ):  
Գրողի լուսը քոռնար,  
Աշխարքն էլ հուրիշ մարդ չկար,  
Թուցած լուսը համա ըե՛տեսաւ,  
Վայ ումուտ (յոյս) ապաւա (ապաւէն) ջան, ջան, ջան:  
Շատ իր ապրել աշխարիս վրէն,  
Մանր բալէքիդ ուրախութէնը տէսէ.  
Որ նրանց վիզն էլ իմեռու խետ զանիր,  
Զեռքներս ծոցներս անօթի թողիր:  
Տուն արի, մարդ ջան, ջան, ջան,  
Նամուսիդ զուրբան, ջան, ջան,  
Թասիրիդ մատաղ, ջան, ջան,  
Դէյրաթիդ մեռնիմ, ջան, ջան:  
Ճժերն անօթի են՝ հաց կուզեն,  
Հմւստ տամ, ձէն արա, քաւ ջան,  
Հնչի մեզի թողիր խլզի մուխտէջի,  
Վզներս ծուռը, փորներս անօթի:

## Որդու վլայ

Այ իմ նխշուն գառ ջան,  
Իմ չինըրի ծառ ջան,  
Թեզ էլ մեռնիմ, քո բոյին էլ,  
Թեզ էլ զուրբան, քո յըշկէրին<sup>1)</sup> էլ:  
Քո պստի բէրնին զուրբան,  
Վայ իմ եղնիկ բալա ջան,  
Վայ իմ ջրէէ ջիվան ջան,  
Իմ թազա թաքաւոր ջան:  
Ախչիկ ի ջոկում որ քէ զսակի,  
Նշանի մաննիկը քաղքից ի բերում,  
Կանաչ կարմիր կոսպանս ի<sup>2)</sup> կապում,  
Բը հմւր ա նաղարի զուռնի ձէն չեմ լսում:  
Յաշկէրդ բաց, բալա ջան,  
Ժամ են տանում, ոտներիդ զուրբան,  
Էն ճարասար լիզումիդ դալադին զուրբան,  
Հնչի լոռւեցիր, հնչի չես խօսում:  
Ել վեր տես՝ զոնախ են էկէ,  
Խինա ենք դրէ, նաբօխտ են տալում,

1). աչքերին 2) էկ.

Ել շորերդ Խափի, գիլաբդ (վարդեջուր) ցանենք  
Տանենք ժամը պսակենք բերենք:  
Աթ խնամի ջան, հարի տես բալիս,  
Պսակի շորերը խաքցըրեր եմ,  
Անդուռ անակոչկա (անպատռւնան) հորի մէջ դրէ,  
Տես բալէս ինչ քաֆը մօր ա ռաստ էկէ:  
Եարաբ իսանից էլ արսըզ բան գնի,  
Հէքուց մէկէլ օր էս հմէնը պտի հնցնի,  
Վայ ես թմալ մոռնամ իմ աղիզ բալին,  
Վայ խողը գլխիս, փոշին արկիս...

Սովորաբար ննջեցեալին մի օրից աւելի տանը չեն պահում,  
այլ տանում են եկեղեցի և դնում կամ եկեղեցում և կամ սրա  
մօմ և յատուկ այս նալատակով շինուած մի սենեկում, որ կոչ-  
ում է Շինուեալուն:

Այս գաւառում կանայք չեն ուղեկցում ննջեցեալին ոչ մի-  
այն եկեղեցուց մինչև գերեզմանատուն, այլև տանից մինչև եկե-  
ղեցի: Դիակաբար ոչ քաղաքում և ոչ գիւղերում չկայ. դագաղը  
տանում են ողամարդիկ կամ ուսերին դրած և կամ ձեռներին  
բռնած: Սովորաբար դագաղի երեսը բաց է լինում, և դագաղի  
խուփը մի մարդ զլխին դրած տանում է ամենից առաջ. սրան  
հետևում են տիրացուները և քահանաները, ապա չորս մարդ՝ դա-  
գաղը բռնած և ի վերջոյ ողամարդ յուղարկաւորողներ՝ շրջա-  
պատած սպառներին:

Ընդհանրապէս չափահան ննջեցեալների համար պատարագ  
են մատուցանել տալիս և ապա թաղում: Պատարագի ժամանակ  
ննջեցեալը դրուած է լինում եկեղեցում, կամ յատուկին և կամ  
սև ծածկոցով ծածկուած մի սեղանի վրայ, երեսը դէպի արևելք  
ուղղած: Գլխի և ոտների մօմ վառում են կերպններ: Հարուսա-  
ները գառել են տալիս եկեղեցու ջահի մոմերը ևս: Պատարագի  
միջոցին բաժանում են պատճեները: —ննջեցեալի բարեկամներից  
մինը՝ ձեռին մոմեր ու դրամ դարսած մի մատուցարան՝ ծխա-  
տէր քահանայի առաջնորդութեամբ բաժանում է քահանաներին  
մի մի մոմ և 20—50-ական կոպէկ, պատարագիչ քահանային՝  
մի բուրլի և տիրացուներին 5—10-ական կոպէկ: Պատարագի  
պւարտին պատարագիչ քահանան մօտենում է դագաղին և «հոգ-  
ւոց» ասում: Եւ գառնալով դէպի ննջեցեալի մօտիկ ազգական-  
ները՝ միմիթարում ասելով: Սուրբ հոգով միմիթարուէք: Միենայնը  
ասում են նաև յուղարկաւորողները:

Պատարագի աւաբտին, որ տեղի է ունենում ժամը 9—10-

ին, որովհետև միշտ առաւտեան ժամասացութեան կից են անում, յուղարկաւորոգները ցրւում են, իսկ միքանիսը տան քահանայի հետ սպաւորներին տանում են տուն:

Ճաշից յետոյ սպատուն հաւաքուած կանայք սպաւոր կանանց տանում են եկեղեցի՝ հրաժեշտ առլու ննջեցեալին: Այս տեղ կը բեկին սկսում է սարսափելի կոծը և «գովքը», որից յետոյ բոլորը զերադառնում են սպատուն:

Ժամը 3<sup>½</sup>—4-ին սկսում են զանգը տալ հատիկ հատիկ—միայն մեծ զանգը խփում են մի անգամ, սպասում մինչև ձայնը կտրուի, յետոյ կրկին խփում, այսպէս շարունակում են 5—10 բոպէ: Այս եղանակից բոլորը հասկանում են, որ «մեռելի զանգ հն տալիս»: Յուղարկաւորոգները հաւաքուում են եկեղեցի, գալիս են սպաւոր տպամարգիկ քահանայի և մօտիկների ուղեկցութեամբ: Մկում են կատարել թաղման կարգը, որի ժամանակ բոլոր ներկայ եղողներին մոմենք են բաժանում և սրանք վառած բռնում են: Ապա միենոյն կարգով տանում են գերեզմանատուն: Ճանապարհի վըրայ գանուսպ աներից մարդիկ դուրս են թափում, որ իրենց ոցաւն ու չոռը մեռելի հետը տանի: Մանստանդ հիւանդները աշխատում են մի կերպ դուրս պղճնիլ: Շատ անգամ սրանք թելով չափում են իրենց հասակը ու թելը ուղարկում դագաղի մէջ գընելու, որպէսզի իրենց ոցաւն ու չոռնա էլ թելի միջոցով փոխանցի մեռելին:

Գերեզմանը փորում են ազգական ննջեցեալների մօտ 2—3 արշին խորութեամբ: Գերեզմանահատները, որ սովորաբար ժամհարը կամ աղքատ մարդիկ են լինում, վարձատըւում են նընջեցեալի միքանի հնոտիներով և երկու անգամ ճաշի են հրաւիրուում:

Թաղման եկեղեցական կարգը կատարելուց յետ, յուղարկաւորոցները մօտենում են սպուրոներին և նրանց ձեռքը սեղմելով ասում: «Սուրբ հոգով մխիթարուէք»: Սրանք էլ հրաւիրում են սրանց հէնց գերեզմանի մօտ պատրաստեծ սեղանից մի բաժակ օղի խմել և մի քիչ չոր միրգ ուտելի թոլորը գրեթէ միատեսակ բարեմախտում են: «Աստուած հոգին մխիթարէ, յետի դատաստանը քաղցր անա»:

Սրանից յետոյ կամ վերադառնում են եկեղեցի և երեկոյեան ժամասացութիւնից յետոյ, կամ ուղղակի, գնում սպատուն՝ հօգունաց ուտելու Մատուցանում են բողբաշ և փլաւ, երբեմն նաև թարմ ձուկ և խոշլամա (իւղի մէջ կարմրացրած միս): Հոգունաց ուտողների թիւը չափազանց մեծ է լինում, որովհետև բացի յուղարկաւորողներից գալիս են նաև գրեթէ բոլոր աղքատները: Եւ

եթէ միորեկ բարեկամ կամ հարևան չի գալիս հոգուհաց ուտելու, նրա առևն են ուղարկում մի աման բողբաշ և 2—3 հատ հաց: Ո՞չ մի բարեկամի չեն մոռանում, մանաւանդ որ սրանք էլ մինչեւ այդ հոգու հացը սրգա-սեղան են ուղարկում իրենց, որովհետեւ մինչեւ այդ ժամանակ սգուրները սիրու չեն ունենում իրենց համար մի որեմէ բան պատրաստելու: Սպասեղանը բաղկացած է լինում փլաւից, ձկից, խաշլամից, իսկ պաս օրերին՝ լորիից, սիսեռից, բոխուց և միքանի շիշ օղի ու զինուց:

Թաղման երկորդ օրը բահանան գալիս է ննջեցեալի տնեցիներին սպից նանելուա այսինքն մինչեւ այդ օրը տանը նստած սգաւոր տղամարդկանց շուկայ տանելու: Միանում են նաև մօտիկ բարեկամները և մանելով մի գինետուն, գինի և օղի են պահանջում ամէն մի բարեկամի հաշուին, խոռում, ննջեցեալի համար բարեմախտութիւններ անելով և երբեմն բոլորովին հարբած դուրս գալիս: Վերջին ժամանակներս քաղաքում բահանան դադարել է այս ծէսին մասնակցելուց: Այս ծէսից յետոյ միայն տղամարդիկ դուրս են գալիս անից և գնում իրենց գործին:

Ննջեցեալի մօտիկ ազգական կանայք եկած են լինում սգաւուն և այստեղ մնում են 3—4 օր, մինչեւ որ իրենց տեղբակները կամ սկսուրները չեն գալիս սգաւուն, մխիթարում սգուրներին և տուն տանում իրենց: Հետզհետէ գրեթէ ըոլոր բարեկամ և նոյն իսկ հարևան կանայք գալիս են սգաւուն՝ մխիթարելու:

Թաղման եօթներորդ օրը կստարում են «այլ եւ օխտեք» («այգ և եօթը»): Հաւաքւում են բարեկամ տղամարդիկ և կանայք և բահանայի հետ գնում են զերեզմանատուն, ուր զերեզմանի վրայ եկեղեցական կարգը կատարելուց ու «լաց ու կոծից» յետ խմում են մի մի բաժակ օղի՝ բարեմախտութիւններ անելով և զերազանում սգաւուն՝ ճաշելու:

Միքանի օրից յետոյ կանայք զերցնելով իրենց հետ միքանի կսոր սապոն, միքանի փունտ շաքար և մի գլիխ ու շալ՝ սըգաւոր կնոջ համար, գալիս են սգաւուն, լուանում ննջեցեալի շորերը, որպէսզի կարողանան բաժանել և սգաւորների գլուխները՝ որպէսզի սգից ենեն, Սրանից յետոյ միայն սգուրները սկսում են տանից դուրս գալ և իրենց գործով զբաղուել:

Երբ օտարութիւնից մի որեմէ ազգական վերադառնում է, վերցնում է իւր հետ մի բահանայ և նրա հետ միասին այցելելով սգուրներին՝ «հոգոց» է ասել տալիս:

Տարուայ ընթացքում առաւելապէս հետևեալ «մեռելոց» օրերին օրնենել են տալիս ինչպէս նոր, այնպէս և հին ննջեցեալների զերեզմանները. Համբարձման չորեքշաբթի օրը, բարեկենդանի

հինգշարթի օրը՝ ջոօրհնէքի երկուշարթի օրուայ փոխարէն, երիշատակ վարդանանց համատակների, Աստուածածնի վերափռխման և Ա. Խաչի երկուշարթի օրերը:

Սովորաբար ամէն շարաթ օր, ճաշից յետոյ կանայք գնում են գերեզմանատուն, իրենց սիրելիների գերեզմանների վրայ ողբալու և օրհնել տալու, այս պատճառով էլ քաղաքում՝ քահանաները հերթով սպասում են գերեզմանատանը:

Առաջին տարուայ նշանաւոր տօների նախօրեակներին բարեկամ կանայք և տղաժարդիկ գնումը են մխիթարելու սգուորներին:

Գերեզմանատները բոլորովին անխնամ են թողնուած, գերեզմանները խումբ և անկանոն կերպով կուտակուած են միմեանց մօտ: Ընդհանրապէս շատ քչերի վրայ կան գեղեցիկ գերեզմանաքարեր, Սրանց մեծ մասը դադարածե է՝ եռաստիճան պատուանգանով<sup>1)</sup>:

1) Այս դաւառի բնակարանները, ընա՞իշների զգմատները և ընտանեկան կեանքը միանգամայն նման լինելով վայոց Զորի, Բորչալուի գաւառի և այլ հայարձնակ գաւառներին՝ որ արգէն միքանի անգամ նկարագրել ենք: աւելորդ՝ ամարեցինք այստեղ և կրկնել: